ՇԻՐԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Հ) - 94
Շ 642

Շ 642 **Շիրակ: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին** / Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն. Եր.: Տնտես. բարեփոխումների վերլուծ. - տեղեկատվական կենտրոն, 2012. - 90 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Շիրակի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Հ) - 94

ISBN 978-9939-9065-3-9

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Մինաս Ավետսիյան, Ձաջուռ (1960)

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Շիրակ

Հին ավանդությունն ասում է, որ Արագածի փեշերին փռված եդեմական այգուց մեղանչած մարդուն արտաքսելով, արարիչը չկամեցավ իր հանդուգն, բայց միամիտ զավակին միայնակ ու անզեն թողնել բնության արհավիրքներին դեմառդեմ. գթասիրտ արարիչը տաղանդներով ու շնորհներով լեցուն պարկը հանձնեց հրեշտակին և ուղարկեց մարդու ետևից: Արագածի փեշերն ի վար սլացող հրեշտակի ուսին պարկը պատռվեց՝ դիպչելով լեռան բարձրաբերձ եղջրին և մինչ հրեշտակը կնկատեր պատահածը, պարկից աստվածային բազում-բազում տաղանդ ու շնորհք թափվեց երկնից: Ու այդ օրվանից երկնակամարում սփռված շնորհները մնացին որպես Երկնային Ծիր Կաթին, իսկ այն հողը, ուր թափվեցին արարչի պարգևած տաղանդներն ու շնորհները կոչվեց Շիրակ:[1]

1 Հնդեվրոպական հնագույն լեզուներում «Շիր-ակ» նշանակում է «կաթի ուղի»:

Եվ արարչի շնորհներով պարարտացած Շիրակի բարեբեր հողում դարը-դարին ծնվեցին մեկը մյուսից տաղանդավոր ու հանճարեղ ժառանգները նախահոր: Շիրակի հողը կյանք ու ոգի պարգևեց անթիվ ու անհամար արվեստագետների ու արհեստը՝ արվեստի բարձունքների հասցրած վարպետների, երկնեց բազում պոետ ու փիլիսոփա, գուսան ու ծաղկողն, քարտաշ ու ճարտարապետ, գիտնական ու նկարիչ, դարբին ու երգահան, կավագործ ու շինարար...

Այստեղ՝ Շիրակում, տասնչորս դար առաջ իր ժամանակի մեծագույն տիեզերագետը ճանաչեց Ծիր Կաթնի խորհուրդը: Շիրակը դարձավ արքաների նստավայր ու քաղաքակրթությունների խաչմերուկ: Եվ Շիրակի դաշտավայրում վեր խոյացող հայոց քաղաքամայրն ուներ շատ բնակիչ, քան ցանկացած մայրաքաղաք՝ արևմտյան քաղաքակրթության օրրանում: Քաղաքամայր, ուր մարդն իր ոգու համար ավելի մեծաթիվ ու հոյակերտ տաճարներ է կառուցել, քան կացարան՝ իր մարմնի համար. մարդկության քաղաքակրթության մեջ չտեսնված ու անկրկնելի նվաճում ու կոթող՝ մարդու ստեղծագործ ոգեղենությանը: Շիրակի հողը

դարձավ մետաքսի ճանապարհի առանցքային հանգույցն ու ի մի բերեց մարդկության Արևելքն ու Արևմուտքը...

Փակ սահմանների ու պատերազմների, հեղափոխությունների ու աղետների մեր օրերում էլ Շիրակը մնում է անհանգիստ ու պայթյունավտանգ տարածաշրջանն իր անցյալով ու ապագայով կամրջողը: Ինչպես դարեր առաջ, այստեղ այսօր էլ փոխադարձ սիրով ու հանդուրժողականությամբ բնության ու տաճարների խորաններում ոգեշնչում են փնտրում տարբեր կրոնների ու դավանանքների պատկանող մարդիկ: Ու մինչ սեփական գաղափարների ու համոզմունքների տարբերությունից դրդված շատ-շատերը զենք կռելով ու հարևանին խոցելով են զբաղված, Շիրակում, ինչպես դարեր առաջ, այդ տարբերությունը լույսի ճառագայթ դարձնելով, մարդիկ ադամամութի աղջամուղջում ընդհանուրն ու միավորողն են փնտրում: Փնտրում են վստահ, որ իրենց բաժին շնորհներն ու տաղանդները հավերժացնելու, ու զավակների համար բարեկեցիկ կյանք կերտելու այսչափ հնարավորություն երբևէ չեն ունեցել: Փնտրում են ու գտնում, քայլառքայլ ու տարեցտարի:

Մարդը

Շիրակի մարզի բնակչության կայուն աճը, 2008 թվականից սկսած, փոխարինելու է եկել նախորդ տասնամյակի շարունակական անկմանը:

2007 թվականից սկսած՝ ծնելիությունը Շիրակի մարզում մշտապես գերազանցել է նախորդ երկու տասնամյակներում ծնելիության ցուցանիշին. 1,000 բնակչի հաշվով ծնվածների թիվը 2007-2011 թվականներին՝ **յուրաքանչյուր տարի գերազանցել է** 1998-2006 թվականների ընթացքում ծնելիության ցուցանիշը:

2002 թվականից ի վեր Շիրակի մարզում աստիճանականորեն ավելացել է

Բնակչության թվաքանակի փոփոխությունը Շիրակի մարզում (հազար մարդ)



նաև ծնունդների թիվը. 2009 թվականին Շիրակի մարզում ծնվել է շուրջ 4,000 երեխա, ինչը նախորդ տասնամյակի նկատմամբ **աննախադեպ է**:

Շիրակի մարզում աստճանականորեն մեծացել է նաև բնական աճը՝ 2009 թվականին շիրակցիների թիվն ավելացել է գրեթե նույնքան, որքան 2000-2002 թվականներին՝ **երեք տարում՝ միասին վերցրած**:

Շիրակի մարզում 1998 թվականից հետևողականորեն ավելացել է նաև

2010 թվականին մարզում բնական աճը 2002 թվականի համեմատ ավելի քան քառապատկվել է:

Ծնվածների թվաքանակը Շիրակի մարզում (մարդ)



ամուսնությունների թիվը. 2011 թվականին ամուսնությունների թիվը 2001 թվականի համեմատ **ավելացել է 40 տոկոսով**:

Եթե 2011 թվականին ամուսնությունների թիվը 2007 թվականի համեմատ ավելացել է շուրջ մեկ հինգերորդով, ապա նույն ժամանակահատվածում ամուսնալուծությունների թիվը կրճատվել է ավելի քան 10 տոկոսով:

Ամուսնությունների և ամուսնալուծությունների քանակը Շիրակի մարզում



Տնտեսության սյուները

Շիրակի մարզում 2001 թվականից աճել է արդյունաբերական արտադրանքը: 2007-2008 թվականներին մարզում արդյունաբերական արտադրանքի աննախադեպ աճին հարվածեց ֆինանսատնտեսական

2011 թվականին արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2002 թվականի համեմատ քառապատկվել է:

ճգնաժամը, սակայն արդեն 2010 թվականին Շիրակի արդյունաբերությունը 2009-ի համեմատ աճեց ավելի քան **40 տոկոսով**, իսկ 2011 թվականին 2010 թվականի համեմատ՝ **70 տոկոսով**:

2010-2011 թվականներին արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով մարզում ավելացել է գրեթե երկուսուկես անգամ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը Շիրակի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



Շիրակի մարզում արդյունաբերության գերակա ճյուղը մշակող արդյունաբերությունն է. արդյունաբերական արտադրանքի ծավալի շուրջ **90 տոկոսը** բաժին է ընկնում արտադրության այս հատվածին:

Մշակող արդյունաբերությունը Շիրակի մարզում աննախադեպ տեմպերով զարգացել է 2010-2011 թվականներին. 2011 թվականին մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2009 թվականի հա-

2011 թվականին մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2009 թվականի համեմատ աճել է շուրջ 2.8 անգամ:

մեմատ աճել է շուրջ 2.8 ամգամ: Նման թռիչքն աննախադեպ է Հայաստանի Հանրապետության գոյության գրեթե ողջ ժամանակաշրջանում: Եթե 2011 թվականին մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2010 թվականի համեմատ հանրապետությունում աճել է 17 տոկոսով, ապա Շիրակի մարզում մեկ տարվա ընթացքում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն **աճել է քառապատիկ**, իսկ մայրաքաղաք Երևանի համեմատ՝ **վեցապատիկ տեմպով**: Շիրակում մշակող արդյունաբերությունն ակնհայտորեն աննախադեպ վերելք է ապրում:

Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը Շիրակի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Շիրակի մարզում մշակող արդյունաբերության ծավալի (ընթացիկ գներով) ավելի քան 80 տոկոսը 2010 թվականին բաժին է ընկել սննդամթերքի արտադրությանը:

2010 թվականին սննդամթերքի արտադրությունը Շիրակում կազմել է ողջ արդյունաբերական արտադրանքի ծավալի (ընթացիկ գներով) շուրջ **70 տոկոսը**՝ ամենամեծ մասնաբաժինը ողջ հանրապետությունում: Սննդամթերքի արտադրությանը Հայաստանի Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալում բաժին է ընկնում շուրջ 20 տոկոսը, իսկ մայրաքաղաք Երևանում՝ շուրջ մեկ քառորդը միայն:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը Շիրակի մարզում



Սննդամթերքի արտադրությունը Շիրակի մարզի արդյունաբերության հիմնական շարժիչ ուժն է: Սննդամթերքի արտադրության ծավալներով Շիրակի մարզը Հայաստանում **երկրորդն է**:

Շիրակին բաժին է ընկնում հանրապետության մարզերում սննդամթերքի արտադրության ընդհանուր ծավալի շուրջ մեկ հինգերորդը:

Նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ՝ սննդամթերքի արտադրության ծավալները 2010 թվականին ընթացիկ գներով **կրկնապատկվել են**: Ճգնաժամային տարիների ընթացքում զգալիորեն մեծացել է նաև մի շարք ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության ծավալը. 2010 թվականին արտադրության ծավալը 2008 և 2007 թվականի համեմատ ընթացիկ գներով **կրկնապատկվել** է, ընդ որում, 2010 թվականին այս հատվածում արտադրության ծավալներն ընթացիկ գներով կազմել են նույնքան, որքան

Ախուրյանի նորակառույց շաքարի գործարանը

2004-2006 թվականներին՝ երեք տարում միասին:

2008-2010 թվականներին Շիրակի մարզի **Ախուրյանի** տարածաշրջանի Արևիկ համայնքում ավելի քան 100 միլիոն դոլար ծավալով ներդրումների շնորհիվ կառուցվել է ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած **Ախուրյանի շաքարի գործարանը**, որտեղ վերամշակվում է ինչպես ներկրվող կիսաֆաբրիկատ հումքը, այնպես էլ՝ աճեցված ճակնդեղը: 2010 թվականին ձեռնարկությունը վարձակալել է շուրջ **50 հեկտար հողատարածություն** և ցանել շաքարի ճակնդեղ: Առավելագույն հզորությամբ աշխատանքի դեպքում այն կարող է արտադրել **220 հազար տոննա** եվրոպական չափանիշներին լիովին համապատասխանող սպիտակ շաքար, ընդ որում շաքարի ճակնդեղի հումքով շաքարի արտադրությունն առավելագույն հզորության կարող է հասնել չորս-հինգ տարվա ընթացքում: Գործարանի շահագործման արդյունքում ստեղծվել է շուրջ **700 աշխատատեղ՝ 150 հազար դրամ** միջին աշխատավարձով, իսկ շաքարի ճակնդեղի մշակությունը 300 հազար տոննա հասցնելու պարագայում՝ կարող է զբաղվածություն ապահովել շուրջ **20 հազար մարդու** համար:

Հայ-գերմանական նորաբաց «ՎԿՍ-Արմենիա» արտադրական ձեռնարկությունը Ամասիայում

2010 թվականից Ամասիայում գործում է հայ-գերմանական **«ՎԿՍ-Արմենիա»** ընկերությունը, որը մեկ տարվա ընթացքում արտադրել և հանրապետության շուկայում իրացրել է շուրջ **20 հազար մանկական զգեստ**: Արտադրամասում գործում է երկու արտադրամաս՝ կարի և բանվորական: Ընդհանուր առմամբ, այստեղ աշխատում է ավելի քան 80 մարդ: Ներկայում ֆաբրիկայում տեղադրվել և գործում են շուրջ **100 միլիոն դրամ ընդհանուր**

Հանրապետության հյուսիսային դարպասը համարվող Ամասիայում ապրող սակավաթիվ բնակիչների համար 2011 թվականի հուլիսի 27-ն ամենախոստումնալից օրերից մեկն էր: Հայ-գերմանական ընկերությունը՝ ՎԿՍ-Արմենիան, մուտք գործեց բնակավայր՝ 100 աշխատատեղով ապահովելով արտագաղթի մեծ ցուցանիշ ունեցող համայնքին: 53-ամյա Գայանե Մկրտչյանն արդեն յոթ ամիս է դստեր և որդու հետ աշխատում է Ամասիայի նորաբաց կարի ֆաբրիկայում: Ընտանիքի երեք անդամները շնորհիվ ՎԿՍ Արմենիայի, ապահովվել են կայուն աշխատանքով:

«Ես ժամանակին աշխատել եմ Գյումրիի «Չկալովի» անվան կարի ֆաբրիկայում: Երկրաշարժից հետո երկար ժամանակ աշխատանք չեմ ունեցել ու հիմա շատ ուրախ եմ, որ էս տարիքում կարող եմ կրկին աշխատանքի անցնել, պարապ տանը չնստել,– ասում է Գայանե Մկրտչյանը,– մեր ընտանիքում ութ հոգի ենք ու ապրում էինք հիմնականում ամուսնուս աշխատանքով: Ամուսինս Ամասիայի էլցանցում էլեկտրիկ է աշխատում, 120 հազար դրամ ստացած աշխատավարձը չէր բավարարում: Հիմա ինձնից բացի, աղջիկս ու փոքր տղաս էլ են ֆաբրիկայում աշխատում, կարողանում ենք ընտանիք պահել: Հույս ունենք, որ հետագայում ավելի լավ է լինելու, որովհետև դեռ նոր է, ասել են, որ ընդլայնվելու է, աշխատավարձերն էլ, կախված մեր աշխատանքից, կբարձրացնեն: Դե նոր ենք, դեռ պիտի զարգանա ամեն ինչ: Ամենակարևորն այն է, որ Ամասիայում աշխատատեղ ստեղծվեց, մարդկանց մոտ հավատ արթնացավ, որ չթողնեն գնան: Եթե ամեն ինչ լավ լինի, վստահ եմ, որ գնացածներն էլ հետ կգան»:

արժեքով ժամանակակից կարող մեքենաներ, կտորեղենի ձևման սեղաններ, սարքեր, կարող մեքենաների տասը հոսքագծեր: Նախատեսվում է մինչև 2013 թվականը ֆաբրիկան հագեցնել նորագույն տեխնոլոգիաներով:

2010 թվականից Շիրակի մարզում կառուցվում է **ածիկի արտադրության գործարանը**:

2007-2011 թվականներին Գյումրի քաղաքում մասնաճյուղեր են բացել **Կոնվերս բանկը, Արարատ բանկը, Հայբիզնեսբանկը, Պրոկրեդիտ բանկը,** իսկ **Հայգյուղփոխբանկը** մասնաճյուղեր է բացել նաև Արթիկում և Աշոցքում: 2011 թվականին Գյումրի քաղաքում բացվել է **Զարգացման Հայկական Բանկի «Գյումրի» մասնաճյուղը**, որը լիովին վերանորոգված է, հագեցված ժամանակակից տեխնիկայով: Բազմաթիվ ծառայությունների շարքում, գյումրեցիների ուշադրությունը բանկը ցանկանում է հրավիրել, հատկապես, առևտրային և սպառողական երկարաժամկետ վարկերի, ինչպես նաև ժամկետային ավանդների պայմաններին, որոնք իրենց գրավչությամբ առանձնանում են բանկային ծառայությունների հայաստանյան շուկայում: Շիրակի մարզում տեղադրվել և գործում են մի շարք առևտրային բանկերի շուրջ մեկուկես տասնյակ բանկոմատներ:

Շիրակի մարզում 2007-2011 թվականներին կառուցվել և հաջողությամբ գործում են մի շարք հյուրանոցա-ռեստորանային համալիրներ՝ ապահովելով զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը:

Շիրակի մարզի հյուսիս-արևմուտքում ստեղծվել է **«Արփի լիճ» ազգային պարկը**, որում ընդգրկված են մարզի 14 համայնքներ: Ազգային պարկը մեծապես կնպաստի Շիրակի մարզում զբոսաշրջության՝ հատկապես էկոտուրիզմի զարգացմանը և կօգնի պահպանել Հայաստանում Շիրակ-Ջավախք բարձրավանդակի բացառիկ կենսաբազմազանությունը: Ազգային պարկի ստեղծմամբ՝ հողի ավանդական օգտագործումը կդառնա ավելի հեռանկարային, իսկ տարածաշրջանը՝ ավելի գրավիչ հայաստանցի և արտասահմանցի զբոսաշրջիկների համար. տարածաշրջանը հայտնի է որպես միջազգային և հանրապետության Կարմիր գրքերում գրանցված թռչունների, սողունների ու բույսերի տեսակնե-

«Շիրակ էքսպո» ամենամյա ցուցահանդեսում

րի ապրելավայր. այստեղ գրանցված է ավելի քան 140 թռչնատեսակ, որոնցից շուրջ 80-ը բազմանում է Արփի լճի կղզիներում: 2011 թվականին ավարտվել է ազգային պարկի հիմնական շինությունների կառուցումը:

Շիրակի մարզի զարգացման համար կարևոր նշանակություն ունի Գյումրի քաղաքը **տեխնոքաղաքի վերածելու տեսլականը**: Տեխնոպարկի ստեղծումով հնարավորություն կընձեռնվի արտադրական գործընթացներում ընդգրկելու Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի բարձր որակավորում ունեցող մասնագետներին: Փոքր ձեռնարկությունների ստեղծումը, դրանց գերակայությունների նախանշումը և մրցունակ ուղղությունների զարգացումը խթան կհանդիսանա գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար:

2011 թվականին Շիրակի մրցունակության կենտրոնի կողմից Գյումրիում անցկացվել է ամենամյա **«Շիրակ Էքսպոն»**՝ համախմբելով շուրջ 80 ընկերությունների, որոնք ցուցադրել են ծառայությունների և արտադրանքի մեծ տեսականի, այդ թվում՝ սննդամթերք, տեքստիլ և շինանյութ:

«Լենտեքս» ձեռնարկությունում. արդի տեխնոլոգիաների և արտադրական նոր մշակույթի համատեղումը

Լենտեքս ՍՊԸ-ն գուլպաների և զուգագուլպաների խոշորագույն արտադրողներից մեկն է Հայաստանում: 2007 թվականից շահագործման է անցել «Lentex» ապրանքանիշով գուլպաների և զուգագուլպաների արտադրության նոր հոսքագիծը:

Սիրանույշ Մատինյանը հիմնադրման օրվանից աշխատում է «Լենտեքս» ձեռնարկությունում: Վաթսունամյա կնոջ համար սա հրաշալի հնարավորություն է կիրառելու դեռևս նախկին աշխատանքային գործունեության ընթացքում ձևավորված հմտությունները: Ժամանակին տիկին Սիրանույշը աշխատել է Լենինականանի Գուլպանասկեղեն արտադրական միավորումում: Երկրաշարժից հետո շուրջ տասնհինգ տարի չի աշխատել: Պատմում է, որ աշխատանքի հրավեր ստացել է անձամբ «Լենտեքս» ՍՊԸ-ի տնօրենից, ով այդ ժամանակ փորձում էր շուրջը համախմբել նախկին գուլպանասկեղեն արտադրական միավորման աշխատակիցներին: Տարիների ընթացքում կարող-բանվորուհուց աճել-հասել է կարի արտադրամասի համակարգողի աստիճանի: Գոհ է, թե՛ աշխատավարձից, թե՛ կոլեկտիվից: «Լավ աշխատանքի համար տնօրինությունը նաև պարգևավճարներ է տալիս»,– ասում է Սիրանույշ Մատինյանը:

Տիկին Սիրանույշի 6 անձից բաղկացած ընտանիքը բնակարանի տեր է դարձել. «Գյումրիում ինչն է կարևոր. տուն ունենաս, աշխատանք ունենաս, շատից քչից կապրիս: Հմի ես էնքան ուրախ եմ, որ էս աշխատանքը կա: Եթե էս ձեռնարկությունը չեղներ, ես հմի հաստատ Ռուսաստան էի գնացել աշխատելու, մանավանդ, որ առաջարկ ունեի: Բայց հիմի արդեն էլ գնալու մասին չենք մտածե: Կապրինք, կաշխատինք մեր հայրենի քաղաքում: Ես նույնիսկ մարդկանց գիտեմ, որ իմացել են մեր ձեռնարկության մասին, կուզեն խոպանից հետ գան, Գյումրիում մնան աշխատին: Եթե աշխատանք եղավ, հայը կյանքում դուրս չի էրթա»,– ասում է Սիրանույշ Մատինյանը:

Շիրակի մարզում 2008-2011 թվականների չորս տարիների ընթացքում գյուղատնտեսության համախառն արտադրանքն ընթացիկ գներով կազմել է գրեթե **նույնքան**, որքան 2002-2007 թվականների **վեց տարիներին** միասին:

Շիրակի մարզում բուսաբուծությունն ու անասնաբուծությունը զարգացել են խիստ համաչափ: 2010 թվականին գյուղատնտեսության երկու ուղղություններիի համախառն արտադրանքն ընթացիկ գներով գրեթե նույնական է:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Շիրակի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2007-2010 թվականներին՝ չորս տարիներին, Շիրակի մարզում բուսաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով կազմել է գրեթե նույնքան, որքան 2001-2006 թվականների վեց տարիներին:

Նույն ժամանակահատվածում Շիրակի մարզում **կրկնապատկվել** է նաև անասնաբուծության համախառն արտադրանքը՝ ընթացիկ գներով: 2010 թվականին հանրապետության անասնաբուծական համախառն արտադրանքի շուրջ 15 տոկոսը արտադրվել է Շիրակի մարզում:

2010 թվականին բուսաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով 2001 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի ծավալները Շիրակի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Շիրակի մարզում են Հայաստանում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ամենամեծ ցանքատարածությունները՝ Գեղարքունիքի մարզից հետո: Հայաստանում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների յուրաքանչյուր հինգերորդ հեկտարը մշակվել է Շիրակում: Շիրակի մարզում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի բերքատվությունը **գերազանցում է** հանրապետության միջին ցուցանիշը՝ զիջելով միայն Արարատյան դաշտավայրին և Գեղարքունիքին: Մեկ հեկտարից Շիրակի մարզում ստանում են հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ավելի քան **2.3 տոննա բերք**: Բերքատվությունը բարձրացել է

Եվրոպական տեխնիկան Շիրակի դաշտերում

հատկապես 2007-2010 թվականներին՝ կառավարության ձեռնարկած մի շարք միջոցառումների արդյունքում:

2010 թվականին 2005 թվականի համեմատ Շիրակում ստացվել է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի **կրկնակապատիկ** բերք: 2010 թվականին Հայաստանում հավաքված հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի բերքի 20 տոկոսը հավաքվել է Շիրակի մարզում:

2010-2011 թվականներին Շիրակի մարզում ստացվել է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ավելի շատ բերք, քան 2006 թվականին Հայաստանի մյուս բոլոր մարզերում միասին վերացրած:

Շիրակի մարզում են նաև Հայաստանում **կարտոֆիլի՝ մեծությամբ երկրորդ ցանքատարածությունները**: Ճգնաժամին նախորդող տարիներին կար-

Հացահատիկային եվ հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները (հա)



2011 թվականին Շիրակի մարզը կարտոֆիլի համախառն բերքով հանրապետությունում երկրորդն է՝ զիջելով միայն Գեղարքունիքին:

Համախառն բերքը Շիրակի մարզում (հազ. տոննա)



տոֆիլի ցանքատարածությունները մարզում աստիճանականորեն ընդլայնվել են՝ 2008 թվականին հասնելով **աննախադեպ շուրջ 4,600 հեկտարի**: 2009-2010 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով կարտոֆիլի ցանքատարածությունների նվազումը 2011 թվականին կրկին փոխարինվել է աճով: Գյուղատնտեսության ոլորտում ՀՀ կառավարության վարած քաղաքականության արդյունքում Շիրակի մարզում կարտոֆիլի բերքատվությունը տարեց-տարի բարձրացել է՝ 2011 թվականին **կազմելով շուրջ 25 տոննա մեկ հակտարից**, ինչը երկրում զիջում է միայն Արարատյան դաշտավայրի բերքատվությանը: 2008-2011 թվականներին՝ չորս տարում, Շիրակի մարզում ստաց-

Կարտոֆիլի ցանքատարածությունները և համախառն բերքը Շիրակի մարզում



Պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները Շիրակի մարզում (հա)



վել է գրեթե նույնքան կարտոֆիլի բերք, որքան 2000-2007 թվականներին՝ ութ տարիներին՝ միասին:

Նախորդ տասնամյակում Շիրակի մարզում աստիճանաբար ընդլայնվել են նաև բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները. 2011 թվականին 2002 թվականի համեմատ դրանք ավելացել են ավելի քան մեկ երրորդով: Աստիճանականորեն մեծացել է նաև բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը: Այսպես, 2011 թվականին 2002 թվականի համեմատ Շիրակի մարզում **բանջարանոցային մշակաբույսերի բերքն ավելի քան կրկնապատկվել է**:

Աշնանացան մշակաբույսերի ցանքսն՝ ըստ մարզերի, 2012թ.



Շիրակի մարզում ընդլայնվել են նաև պտղի և հատապտղի տնկարկնե-րի տարածությունները. 2010 թվականին դրանք 2001 թվականի համեմատ **կրկնապատկվել են**:

Շիրակի մարզը եղել և մնում է աշնանացան մշակաբույսերի ցանքի անվիճելի առաջատարը Հայաստանում:

2011 թվականին 2001 թվականի համեմատ խոշոր եղջրավոր անասունների գլխաքանակը Շիրակի մարզում ավելացել է մեկ երրորդով:

Կովերի գլխաքանակով Շիրակի մարզը հանրապետությունում զիջում է միայն Գեղարքունիքին, իսկ 2001 թվականի համեմատ՝ 2011 թվականին կո-

Հայաստանի աշնանացան մշակաբույսերի ցանքա-տարածությունների մեկ քառորդը Շիրակում է:

վերի գլխաքանակը Շիրակում ավելացել է ավելի քան մեկ հինգերորդով: Նույն ժամանակահատվածում ոչխարների և այծերի գլխաքանակը Շիրակի մարզում ավելացել է մեկ քառորդով:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն՝ ըստ ՀՀ մարզերի, 2011թ. (հազար գլուխ)



2011 թվականին խոշոր եղջրավոր անասունների ամենամեծ գլխա-քանակը Շիրակի մարզում էր՝ շուրջ հարյուր հազար գլուխ:

Շիրակի մարզում իրացվել և իրացվում է անասունի և թռչնի՝ հանրապետությունում **ամենամեծաքանակ ծավալը**՝ Գեղարքունիքի մարզից հետո:

Շիրակի մարզը **հանրապետության երկրորդ կաթ արտադրողն է**: 2011 թվականին կաթի արտադրությունը Շիրակի մարզում 2001 թվականի համեմատ **ավելացել է մեկուկես անգամ**: Կաթի արտադրությունը մարզում չնվազեց անգամ ֆինանսատնտեսական ճգնաժամի ծանր տարիներին:

Շիրակի մարզը հանրապետության **ամենամեծ բուրդ արտադրողն է**՝ Գեղարքունիքից և Արագածոտնից հետո : 2010 թվականին Շիրակում արտադրված բրդի քանակը մեկ հինգերորդով գերազանցում է 2001 թվականի արտադրանքը:

Շիրակում է արտադրվում կաթի յուրաքանչյուր վեցերորդ տոննան Հայաստանում:

Կաթի արտադրությունն ըստ մարզերի, 2011թ. (հազ. տոննա)



«Մեր գյուղացիները աշխատասեր են, շատերը արտագնա աշխատանքի գնում էին, հիմի կամաց-կամաց ինչ-որ դադարեցրել են, տեղում աշխատանք կգտնին: Էսօրվա դրությամբ սիլիտրեն մենք կառնեինք 8-10 հազար դրամով, կառավարությունը էսօր 6 հազարով գյուղացուն բերել է սիլիտրա է բաժանում: Գյուղտեխնիկա էլ է բերել, դիզվառելիքը էժան գնով կտա, գյուղտեխնիկան վարկով էլ կուտա ժողովրդին, որ գյուղացին կապվի հողի հետ, մնա գյուղում, աշխատի»:

Սաղաթել Դավթյան. Մայիսյան համայնքի բնակիչ

Ավետիսյան Գարիկը կրթությամբ երաժիշտ է: Ապրում է Ամասիայում ու արդեն մեկ տարի է աշխատում է «Բանդիվան կաթ» ՍՊԸ-ում: 30-ամյա երիտասարդը ամուսնացած է, ընտանիքում 2 երեխա են մեծանում: Պատմում է, որ մինչև ձեռնարկությունում աշխատանքի անցնելն ընտանիքը պահել է պատահական եկամուտի հաշվին՝ հարսանիքներում նվագելով: «Շատ լավ գործ է, հենց առաջարկեցին աշխատել «Բանդիվան կաթում», անմիջապես համաձայնվա, նախ որ աշխատավարձը բարձր է, ամեն ամիս ստաբիլ կստանանք, պրոբլեմ չկա, հետո էլ Ամասիայից շատ հեռու չէ, ընդամենը 2 կմ, էն էլ ես մեքենա ունիմ, կերթամ-գուկամ,— ասում է Գարիկը,— ես դեռ օգնական եմ, պատրաստի արտադրանքի փաթեթավորումով կզբաղվիմ, պանրի պատրաստման եղանակները կսորվիմ, դեռ առաջ գնալու տեղ ունիմ: Կինս չի աշխատում, ընտանիք պահողը ես եմ ու էս պահի դրությամբ շատ գոհ եմ թե՛ աշխատանքիցս, թե՛ տնօրինությունից»:

Կառնուտ գյուղում արդեն չորրորդ տարին է անվար տեխնոլոգիայով հացահատիկի ցանքաշրջանառություն են իրականացնում և հիմնականում գոհ են արդյունքներից: Կառնուտցի ֆերմեր Հովհաննես Գաբոյանն անցյալ տարի նույն տեխնոլոգիայով փորձնական մշակության համար սերմացու էր ստացել կառավարությունից և «Էյ-թի ջի» հայ-ամերիկայն կազմակերպությունից: «Արդեն 20 տարի է զբաղվում եմ կարտոֆիլաբուծությամբ և հացահատիկային կուլտուրաների մշակմամբ,— ասում է Հովհաննես Գաբոյանը,— կար ժամանակ, որ մշակում էինք, բայց մեծ բերքատվություն չէինք կարողանում ապահովել, լավագույն դեպքում հեկտարից 17-ից 18 ցենտներ: Էս նոր Հայաստան ներկրած էլիտար սերմացուն, որ տրամադրում է կառավարությունը, բավական բերքատու է ու Շիրակի մարզի մեր պայմաններում միջինը 30-ից 31 ցենտներ բերք է ապահովում: Այս նոր տեսակի ցորենի հասկը, որ տրորում ես, հատիկը կարծր է: Սա երկցան ցորեն է: Կարող ես և աշնանը ցանել, և գարնանը ու դա մեծ առավելություն է»:

Շիրակի մարզում 2007-2011 թվականներին նոր շունչ առավ շինարարությունը: 2008-2010 թվականներին՝ երեք տարում, շինարարության ընդհանուր ծավալը Շիրակի մարզում ընթացիկ գներով **գերազանցել է** 1998-2007 թվականներին՝ տասը տարում իրականացված շինարարության ընդհանուր ծավալը: 2009 թվականին շինարարությունը Շիրակի մարզում հասել է երկրի համար աննախադեպ ծավալի՝ ավելի քան **45 միլիարդ դրամ**, ավելին, քան հանրապետության հինգ մարզերում միասին: 2010 թվականին շինարարության ծավալը Շիրակի մարզում ընթացիկ գներով **քառապատկվել է**:

Միայն 2009 թվականին Շիրակի մարզում շինարարության ծավալն ընթացիկ գներով կազմել է նույնքան, որքան 2001 թվականին հանրապետության բոլոր մարզերում միասին:

2009 թվականին հանրապետության մարզերում շինարարության մեկ քառորդն իրականացվել է Շիրակի մարզում:

Շինարարության ծավալները Շիրակի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)

Շիրակի մարզում 2010 թվականին գործարկվել են նույն ծավալի հիմնական միջոցներ, որքան 2005-2009 թվականներին՝ **հինգ տարում միասին**, որքան 1998 թվականին՝ հանրապետության **բոլոր մարզերում միասին**: 2010 թվա-

Շինարարության ծավալների համեմատականը ՀՀ մարզերում 2007-2010թթ. (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



կանին գործարկվել են **տասնապատիկ** ավելի ծավալով հիմնական միջոցներ, քան 2005 թվականին (ընթացիկ գներով):

2008-2010 թվականներին՝ երեք տարում, Շիրակի մարզում իրականացված

2010 թվականին Շիրակի մարզում շինմոնտաժային աշխատանքների ծավալն ընթացիկ գներով կազմել է 2004 թվականի ծավալի հնգապատիկը:

Շինմոնտաժային աշխատանքների ծավալը Շիրակի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



շինմոնտաժային աշխատանքների ծավալն ընթացիկ գներով **գերազանցում է** 1998-2007 թվականներին՝ **հինգ տարում** կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալը:

Շինարարության ծավալների աննախադեպ աճն առավել ցայտուն արտահայտում են նախորդ տասնամյակում շահագործման հանձնված բնակելի շենքերի և սոցիալական նշանակության օբյեկտների ծավալները. 2010 թվականին Շիրակի մարզում շահագործման են հանձնվել **քառասուն տոկոսով ավելի** ընդհանուր մակերեսով բնակելի շենքեր, քան 2004-2009 թվականներին՝ վեց տարում միասին:

2010 թվականին հանրապետության բոլոր մարզերում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի շուրջ 40 տոկոսը բաժին է ընկնում Շիրակին. ամենամեծ ցուցանիշը մարզերում:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի և սոցիալական նշանակության օբյեկտների մակերեսի համեմատականը ՀՀ մարզերում (հազար քառ. մ)



Մեկ բնակչի հաշվով շահագործման հանձնված բնակելի շենքերի մակերեսով 2010 թվականին Շիրակի մարզը գերազանցել է հանրապետության բոլոր մարզերին և մայրաքաղաք Երևանին:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի և սոցիալական նշանակության օբյեկտների մակերեսի համեմատականը ՀՀ մարզերում (հազար քառ. մ)



2001-2010 թվականներին Շիրակի մարզին է հատկացվել պետական բյուջեից բնակելի շենքերի շինարարությանն ուղղված միջոցների առյուծի բաժինը. տասը տարում Շիրակի մարզին տրամադրվել է բնակելի շենքերի շինարարությանն ուղղված **հանրային միջոցների մեկ երրորդը**:

2010 թվականին հանրապետությունում պետական բյուջեից բնակելի շենքերի շինարարությանն ուղղված միջոցների շուրջ 60 տոկոսը հատկացվել է Շիրակի մարզին:

2001-2010 թվկաններին՝ նախորդ տասնամյակում սեփականաշնորհումից ստացված միջոցները գերազանցապես հատկացվել են Շիրակի մարզին բնակելի շենքերի շինարարության իրականացման նպատակով: Շիրակի մարզին բնակելի շենքերի շինարարության նպատակով տրամադրվել է ՀՀ բոլոր մարզերին հատկացված սեփականաշնորհումից ստացված միջոցների **90 տոկոսը:**

2001-2010 թվականներին մարդասիրական օգնության տարբեր աղբյուրներից հանրապետությունում բնակելի շենքերի շինարարությանն ուղղված միջոցների **կեսից ավելին հատկացվել է** Շիրակի մարզին՝ **տասներեք անգամ ավելի**, քան մայրաքաղաք Երևանին հատկացված միջոցները: Նույն ժամանակահատվածում Շիրակի մարզում բնակչության միջոցների հաշվին

բնակելի շենքերի շինարարությանը բաժին է ընկնում միայն 15 տոկոսը, մինչդեռ Երևանում բնակելի շինարարությունն իրականացվել է գերազանցապես բնակչության և կազմակերպությունների հաշվին. բնակելի շինարարության ավելի քան 95 տոկոսը բաժին է ընկնում այս երկու աղբյուրներին:

Շիրակի մարզում 2004 թվականից հետևողականորեն ակտիվացել է մանրածախ առևտուրը, մեծացել է նրա շրջանառությունը: 2008 թվականին ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով շուրջ վեց տոկոսով կրճատված շրջանառությունը հետագա տարիներին կրկին սկսել է աճել աննախադեպ տեմպով. 2011 թվականին Շիրակի մարզում մանրածախ առևտրի շրջանառության տարեկան աճը վերջին տասնամյակում հանրապետությունում արձանագրված **ամենաբարձր հինգ ցուցանիշների** թվում է: Մանրածախ առևտուրը Շիրակում նման տեմպով երբևէ չի աճել: Թռիչքաձև աճի արդյունքում Շիրակի մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը ընթացիկ գներով գերազանցել է նախաճգնաժամայինը ավելի քան երեք քառորդով՝ երեք տարում շուրջ 25 միլիարդ դրամից հասնելով շուրջ **45 միլիարդ դրամի**:

Շիրակի մարզում աստիճանականորեն ավելացել են մանրածախ առևտրի

2011 թվականին մանրածախ առևտրի շրջանառությունը 2004 թվականի գրեթե քառապատիկն էր:

Մանրածախ առևտրի շրջանառությունը Շիրակի մարզում (մլրդ. դրամ)



Մանրածախ առևտրի շրջանառությունը ՀՀ մարզերում, 2011թ. (մլրդ. դրամ)



օբյեկտները. 2012 թվականին մարզում գործել է մանրածախ առևտրի մեկուկես անգամ ավելի օբյեկտ, քան 2002 թվականին:

Վերջին տարիներին շեշտակի ավելացել է նաև խանութների շրջանառությունը. 2011 թվականին խանութների շրջանառությունը կազմել է 2009 թվականի **կրկնապատիկը**, 2007 թվականի **քառապատիկը** և 2001 թվականի ավելի քան **տասնապատիկը**: 2011 թվականին 2010 թվականի համեմատ՝ միայն մեկ տարում, Շիրակի մարզում խանութների շրջանառությունն ավելացել է գրեթե երկու երրորդով: Եթե 2001 թվականին խանութներում շրջանառության ծավալով Շիրակի մարզը հանրապետության չորրորդն էր, ապա 2011 թվականին բացարձակ առաջատարն է:

Շիրակի մարզում 2005 թվականից ավելացել է կրպակների թիվը. 2011 թվա-

Հանրապետության մարզերում խանութների շրջանառության մեկ երրորդն իրականացվում է Շիրակի մարզում

կանին Շիրակում գործում էին մեկուկես անգամ ավելի կրպակներ, քան 2004 թվականին: 2011 թվականին կրպակների թիվը մեկ տարում ավելացել է տասը տոկոսով:

Շիրակի մարզում, 2008 թվականից սկսած, աճել է նաև կրպակների նախ-

2011 թվականին Շիրակի մարզում խանութների շրջանառությունը գերազանցել է 2001 թվականին հանրապետության բոլոր մարզերում շրջանառությանը:

Խանութների շրջանառությունը ՀՀ մարզերում, 2011թ.



կինում աստիճանաբար նվազող շրջանառությունը: 2011 թվականին կրպակների շրջանառությունը Շիրակի մարզում 2010 թվականի համեմատ մեծացել է ավելի քան **80 տոկոսով**. Հայաստանի Հանրապետության անկախության երկու տասնամյակներում մանրածախ առևտրի հատվածում արձանագրված ամենամեծ տարեկան աճը բացառիկ է ողջ տարածաշրջանում: 2011 թվականին կրպակների շրջանառությունը 2008 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Շիրակի մարզում 2011 թվականին ամենամեծն է հանրապետության մարզերում:

Աստիճանաբար աճել է նաև ծառայությունների ծավալը Շիրակի մարզում: 2011 թվականին ծառայությունների ծավալը Շիրակում ընթացիկ գներով 2006 թվականի համեմատ աճել է **ավելի քան 80 տոկոսով**: Աննախադեպ տեմպով Շիրակի մարզում աճել են տեղեկատվության և կապի ծառայությունները. 2010 թվականի ընթացքում տեղեկատվության և կապի ծառայությունները Շիրակի

Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը ՀՀ մարզերում, 2011թ.



մարզում **երկուսուկես անգամ մեծացել են նախորդ տարվա համեմատ**, ինչն աննախադեպ է հանրապետությունում: Նման աճ նախկինում երբևէ չի արձանագրվել որևէ մարզում: Նման թռիչքաձև աճը հիմքեր է ստեղծում միջնաժամկետ հատվածում Շիրակի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների և տնտեսության գիտատար ճյուղերի հետագա զարգացման համար:

Շիրակի մարզում 2006-2007 թվականներին արտաքին առևտրի աճող ծավալները 2008 թվականին ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով նվազել էին: Սակայն, 2009 թվականից սկսած, արտահանումը սկսեց աստիճանաբար վերականգնվել և 2011 թվականին գերազանցեց նախաճգնաժամային 2006 թվականի ծավալները: 2010 թվականին Շիրակի մարզում արտահանման ծավալը կրկնակի գերազանցել է Թուրքիայի հյուսիս-արևելյան Երզինջան (Երզնկա) նահանգի արտահանման ծավալը:

2008-2010 թվականների ընթացքում Շիրակի մարզում արտաքին առևտրի ծավալն ավելի մեծ էր, քան Շիրակին սահմանամերձ հյուսիս-արևելյան Թուրքիայի երկու՝ Կարս և Բայբուրթ (Բաբերդ) նահանգներում միասին վերցրած և գրեթե նույնքան, որքան գյուղատնտեսական Արդտահան նահանգում:

2007-2011թվականներին Շիրակի մարզի **36 համայնքներում** Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով վերականգնվել և հիմնանորոգվել են ոռոգման համակարգեր, կառուցվել և նորոգվել են երրորդ կարգի ջրանցքներ: 2012 թվականին **Մեղրաշեն** համայնքում կվերականգնվի 1.4 կիլոմետր երկարությամբ երրորդ կարգի ոռոգման ցանցը:

Շիրակի մարզի **Ազատան, Կամո, Գետք, Ոսկեհասկ, Վահրամաբերդ, Հացիկ, Մեծ Սարիար, Բասեն, Արևիկ, Սարատակ, Տուֆաշեն, Պեմզաշեն, Հառիճ, Փանիկ, Նոր Կյանք, Արևշատ, Սառնաղբյուր, Քարաբերդ, Բագրավան, Ջրափի, Շիրակավան, Աղին, Գուսանագյուղ, Կաքավասար, Թորոսգյուղ, Մուսայելյան, Սիզավետ, Մեծ Սեպասար, Բերդաշեն, Գառնառիճ, Բանդիվան, Արեգնադեմ, Ողջի** համայնքներում ստեղծվել և կահավորվել են անասնաբուժական կետեր: **Գյումրի** քաղաքում վերանորոգվել է Հանրապետական անասնաբուժական համաճարակային և ախտորոշիչ կենտրոնը:

2007-2011 թվականներին Շիրակի մարզի տասնչորս, այդ թվում՝ **Ազատան, Քեթի, Մայիսյան, Հացիկ, Ոսկեհասկ, Բայանդուր, Մեղրաշատ, Գետք, Երազգավորս, Ախուրիկ, Ղարիբջանյան** համայնքներում տեղադրվել են ավելի քան 36 **հակակարկտային կայանքներ**: Արդյունքում, 2011 թվականին 2009 թվականի համեմատ կարկտահարության վնասները Շիրակում կրճատվել են շուրջ **տասնապատիկ**:

Միայն 2011 թվականին Շիրակի մարզի 9 համայնքներում՝ **Բերդաշեն, Այգաբաց, Ջրառատ, Մեծ Մանթաշ, Սառնաղբյուր, Լեռնակերտ, Հառիճ, Բասեն և Քեթի,** իրականացվել է արոտների բարելավում և ջրարբիացում:

2008-2009 թվականներին Շիրակի մարզի **12 համայնքներ** ձեռք են բերել **22 միավոր գյուղատնտեսական տեխնիկա**: 2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը **Բանդիվան, Հառիճ** և **Ախուրիկ** համայնքներին հատկացրել է 8 տրակտոր:

2011 թվականին **30 հեկտար տարածքում** հիմնվել են անտառներ, իրակա-

Գյումրիի քաղաքապետարանի նորակառույց շենքը

նացվել են գարնանային ծառատունկի և կանաչ տարածքների վերականգնման աշխատանքներ, տնկվել է շուրջ **20 հազար ծառ ու թուփ**:

2007-2011 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին Շիրակի մարզում կատարվել է **հարյուր հազարավոր գլուխ անասունների և տասնյակ հազարավոր փեթակ մեղուների** պատվաստումներ համաճարակների դեմ: Պետական ֆինանսական միջոցների հաշվին հակահամաճարակային, պրոֆիլակտիկ միջոցառումների շրջանակներում համայնքներին անվճար տրամադրվել են պատվաստանյութեր:

2009-2010 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Շիրակի մարզի գյուղացիական տնտեսություններին անվճար հատկացրել է ավելի քան **2800 կիլոգրամ ցինկի ֆոսֆիդ**:

2008-2009 թվականներին Շիրակի մարզում առաջին անգամ իրականացվել է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր. Տրամադրված վարկային տոկոսադրույքի 10 տոկոսը սուբսիդավորվել է պետական բյուջեից, ինչը նպաստել է մարզում վարկերի տեղաբաշխման ռիսկայնության դիվերսիֆիկացմանը, տնտեսական գործունեության խթանմանը՝ հատկապես գյուղատնտեսական, ագրոտուրիզմի, գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ենթակառուցվածքների զարգացմանը: Հանրապետությունում նման ծրագիր առաջին անգամ իրականացվել է Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանի **44 համայնքերում**. հատկացվել է **100 միլիոն դրամ,** ինչի շնորհիվ սուբսիդավորվել է շուրջ 1 մլրդ դրամ ընդհանուր ծավալով վարկեր: Ամասիացիները կարող են վարկեր ստանալ տարեկան 8 տոկոս տոկոսադրույքով:

2011 թվականին Շիրակի մարզի 65 համայնքների հատկացվել է **140 տոննա էլիտային** և **200 տոննա առաջին** վերարտադրության գարու սերմացու: Ցորենի սերմնաբուծության նպատակով հատկացված 150 տոննա էլիտային սերմացուն բաշխվել է յոթ և ավելի հեկտար ունեցող **44 ֆերմերային տնտեսությունների,** իսկ սերմարտադրության ընդլայնման նպատակով հատկացված 718 տոննա առաջին վերարտադրության ցորենի սերմացուն՝ 69 համայնքների:

Շիրակի մարզի համայնքներում նոր վարձակալական պայմանագրերի կնքման արդունքում գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վարձավճարների ընդհանուր ծավալները 2011 թվականին 2010 թվականի համեմատ ավելի քան **տասնապատկվել** են:

2009 թվականին Շիրակի մարզի **Պեմզաշեն, Մեղրաշատ, Ախուրյան, Ջրափի** համայնքներում հիմնվել են կաթի սառեցման կետեր, իսկ 2011 թվականին մարզում արդեն գործում էր կաթի ընդունման և նախնական վերամշակման 11 կետ:

Ախուրյան համայնքում մեկնարկել է տնկարանային տնտեսություն և պտղատու այգի ծրագիրը, **Մեծ Մանթաշ** համայնքում ավարտին է հասցվել Հայկական կիսակոպտաբուրդ ցեղի բազմապտուղ մաքիների ընտրության, բազմացման, բազմապտուղ ոչխարների հոտի ստեղծման և ոչխարաբուծության ուսումնաարտադրական կենտրոնի ստեղծման ծրագիրը: Ջրաձոր համայնքում ավարտին է հասցվել **«Երևանյան ցեղի հավերի գենոֆոնդի պահպանում, տարածում և օգտագործում գյուղացիական տնտեսություններում»** ծրագիրը:

Ամասիայի շրջանի Բանդիվան համայնքում գտնվող **«Բանդիվան կաթ»** ձեռնարկությունը սկսել է գործել է 2007 թվականից: Հիմնականում զբաղվում է կաթի վերամշակմամբ, կարագի ու պանրի (Լոռի, Չանախ, Սուլուգունի տեսակների) արտադրությամբ: Ձեռնարկության սեփականատերը զբաղվում է խոզաբուծությամբ: Ձեռնարկությունը կաթը հիմնականում մթերում է Ամասիայի ու Աշոցքի տարածաշրջանի գյուղերից. օրական մթերվում է շուրջ մեկուկես տոննա կաթ, սակայն ձեռնարկությունը հնարավորություն ունի մթերելու տասնապատիկ ավելին: Ձեռնարկությունն արտադրում է **22 տեսակի պանիր**: Շուտով

կարտադրի նաև մածուն, թթվասեր ու թան: Ձեռնարկության արտադրանքը հիմնականում սպառվում է Շիրակի մարզում ու Երևանում: Ձեռնարկության ապագային վստահ հայացքով նայող սեփականատերը՝ Կարապետյանների ընտանիքը, նախատեսում է ընկերությունը կապիտալ վերանորոգել ու վերազինել նոր սարքավորումներով:

2007-2011 թվականներին Շիրակի մարզի համայնքներում ստեղծվել են գյուղատնտեսական կոոպերացիաներ: Հանրապետությունում առաջին կոոպերատիվը հիմնվել է Շիրակի մարզի, ամենահեռավոր գյուղերից մեկում՝ **Բերդաշենում**: 2011 թվականին արածեցման հերթափոխային համակարգի ներդրումը, արոտավայրերի ջրարբիացումը, արոտավայրեր տանող ճանապարհների մասնակի վերանորոգումն ու լրացուցիչ կերարտադրության հնարավորությունների ստեղծման արդյունքում 20%-ով արդեն ավելացել են Շիրակի մարզի **Բերդաշեն** համայնքի եկամուտները: Բերդաշենի արոտների բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունքում հնարավոր է դառնում **15-20 տոկոսով** ավելացնել արոտավայրերում արածող կենդանիների կաթնատվությունը, **20-25 տոկոսով՝** քաշաճը և շուրջ **10 տոկոսով՝** արոտում արածող կենդանիների գլխաքանակը:

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և Շիրակի մարզպետ Աշոտ Գիզիրյանը «Բանդիվան կաթ» ձեռնարկությունում

Ենթակառուցվածքները

Շիրակի մարզում նախորդ տասնամյակում աննախադեպ թափով զարգացել են ենթակառուցվածքները:

2011 թվականին գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 1999 թվականի **քառապատիկն էր** և 2003 թվականի կրկնապատիկը: Գազի բաշխիչ գործող ցանցի երկարությամբ Շիրակը հանրապետության մարզերից զիջում է միայն Արատյան դաշտում փռված երկու մարզերին:

2011 թվականին Շիրակի մարզի գյուղական համայնքներում գազի բաշխիչ գործող ցանցի երկարությունը 2002 թվականի համեմատ եռապատկվել է, իսկ 2006 թվականի համեմատ՝ կրկնապատկվել:

2002 թվականի համեմատ Շիրակի մարզի քաղաքային համայնքներում գազի բաշխիչ գործող ցանցի երկարությունը 2011 թվականին կրկնապատկվել է:

Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Շիրակի մարզում (կմ)



2011 թվականին հանրապետության մարզերի քաղաքային համայնքներում գազի բաշխիչ գործող ցանցի ամենամեծ երկարությունը Շիրակի մարզում է:

Գազի փողոցային գործող ցանցի միագիծ երկարությունը ՀՀ մարզերում, 2010թ. (կմ)



Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակով Շիրակի մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին, Կոտայքի և Լոռու մարզերին: 2010 թվականին Շիրակի մարզում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 2002 թվականի համեմատ **եռապատիկ է**: Հանրապետության քաղաքային համայնքներում **ամենամեծ թվով** գազաֆիկացված բնակարաններն ու առանձնատները Շիրակի մարզում են՝ մայրաքաղաք Երևանից և Լոռու մարզից հետո: 2010 թվականին Շիրակի մարզի քաղաքներում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 2002 թվականի համեմատ

Բոլոր սպառողներին բաց թողնված գազը Շիրակի մարզում (մլն խմ)



ավելացել է **երեքուկես անգամ**, իսկ գյուղական համայնքներում նույն ժամանակահատվածում՝ կրկնապատկվել է:

2010 թվականին Շիրակի մարզում բոլոր սպառողներին բաց է թողնվել **կրկնակի մեծ ծավալով** գազ, քան 2003 թվականին, իսկ մարզի քաղաքային համայնքներում նույն ժամանակահատվածում բոլոր սպառողներին բաց թողնված գազի ծավալն ավելի քան **քառապատկվել է**:

2010 թվականին Շիրակի մարզում խմելու ջրի մատակարարման ցանցերի ընդհանուր միագիծ երկարությունը հանրապետության մարզերի թվում ամենամեծն էր՝ Լոռու մարզից հետո: 2010 թվականին Շիրակի ջրատարերի և միջթաղային ու միջբակային ցանցերի միագիծ երկարությունը 2001 թվականի համեմատ գրեթե **քառապատկվել է**, իսկ 2008 թվականի համեմատ ավելացել է գրեթե **տասնհինգ տոկոսով**:

Բնակավայրերի ջրմուղի ցանցի միագիծ երկարությունը Շիրակի մարզում (կմ)



Խմելու ջրի մատակարարման համակարգում կատարված ներդրումների, հաշվառման և կառավարման համակարգի արդիականացման արդյունքում Շիրակի մարզում նկատելիորեն բարելավվել է բնակիչներին ջրի մատակարարման որակը, իսկ կորուստները նվազել են: Այսպես, կորուստների կրճատման արդյունքում 2010 թվականին Շիրակի մարզում սպառողներին բաց թողնված խմելու ջրի ծավալը գրեթե կիսով չափ նվազել է:

Հանրապետության բարեկարգված քաղաքների, փողոցների, անցումների և

հրապարակների ընդհանուր մակերեսով Շիրակի մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին և Կոտայքի մարզին:

2007-2011 թվականներին Հայաստանի Հանրապետությունում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ներդրումների առյուծի բաժինը հատկացվել է Շիրակի մարզին. հանրապետության ոչ մի այլ մարզում այնչափ կապիտալ ներդրումային ծրագրեր չեն իրականացվել, որքան Շիրակում:

2007-2011թթ. գազաֆիկացման, ջրամատակարարման ու ջրահեռացման աշխատանքներին ուղղված ներդրումների ընդհանուր ծավալների համամասնությունը



2007-2011 թվականներին Շիրակի մարզի քաղաքային և գյուղական **33 համայնքներում** մեծածավալ ներդրումներ են կատարվել ջրամատակարարման

Շիրակում 2007-2011 թվականներին ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում մարզին հատկացված ներդրումների ավելի քան 98 տոկոսը կատարվել է վերջին երկու տարում:

և ջրահեռացման համակարգերի բարելավման ուղղությամբ, ընդ որում, ներդրումները գերազանցապես կատարվել են 2010-2011 թվականներին:

2007-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման նպատակով իրականացված կապիտալ ներդրումների **40 տոկոսից ավելին** հատկացվել է Շիրակի մարզին՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ուղղված **ամենամեծածավալ ներդրումները** հանրապետությունում:

2007-2011 թվականներին Շիրակի մարզում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ուղղվել է մարզում կատարված կապիտալ ներդրումների շուրջ **30 տոկոսը**՝ ավելի քան 27 միլիարդ դրամ, որի շուրջ **85 տոկոսը** հատկացվել է Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանը:

Գյումրի, Արթիկ և **Մարալիկ** քաղաքներում, **Հայկաձոր, Ամասիա, Լանջիկ, Ղազանչի, Վարդաղբյուր, Պեմզաշեն, Հարթաշեն, Կամո, Ձույգաղբյուր, Աղին, Առափի, Մայիսյան, Ոսկեհասկ, Ձորաշեն, Մուսայելյան, Կապս, Գետք, Բավրա, Ձրառատ, Հայկավան, Սալուտ, Կարմրավան, Փոքրաշեն, Թորոսգյուղ, Աշոցք, Այգաբաց, Անիպեմզա, Անիավան, Ախուրյան, Ազատան** համայնքներում կառուցվել ու հիմնանորոգվել են խմելու ջրի մատակարարման ցանցեր ու ջրագծեր, հորատանցքեր, կոյուղու կոլեկտորներ, կոյուղագծեր, դիտահորեր, տեղադրվել են խորքային պոմպեր:

Մասնավորապես, բարելավվել են **Արթիկ** քաղաքի և տարածաշրջանի տասնյակից ավելի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը: **Ազատանում** շահագործման է հանձնվել ջրամատակարարման համակարգը, և գյուղն այժմ ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: **Ամասիա** համայնքի «Հայասա» թաղամասում անցկացվել է ջրագիծ: **Աղին** և **Առափի** համայնքներում կառուցվել են կոյուղագծեր, վերանորոգվել են **Հայկավան** գյուղի կոյուղագծերի դիտահորերը: Շիրակի մարզի այլ համայնքներում իրականացվել են մեծածավալ այլ աշխատանքներ, որոնց արդյունքում շիրակցիներն օգտվում են ջրի և ջրամատակարարման զգալիորեն ավելի բարձր որակից:

2007-2011 թվականներին Շիրակի մարզում են կատարվել հանրապետությունում գազաֆիկացման **ամենամեծածավալ աշխատանքները**. Հայաստանում համայնքների գազաֆիկացմանն ուղղված կապիտալ ներդրումների ավելի

քան մեկ քառորդը՝ շուրջ երկուսուկես միլիարդ դրամ ուղղվել է Շիրակի մարզ: Շիրակի մարզում գազաֆիկացման աշխատանքները հատկապես մեծ թափ առան 2009 թվականին. 2007-2011 թվականներին Շիրակում գազաֆիկացման **ներդրումների կեսը** կատարվել է հենց 2009 թվականի ընթացքում:

2007-2011 թվականներին Շիրակի մարզի **երեք քաղաքային և քսանվեց գյուղական** համայնքներում կառուցվել և վերականգնվել են հարյուրավոր կիլոմետր երկարությամբ գազատար մայրուղիներ, ներհամայնքային միջին և ցածր ճնշման գազատարներ, գազաբաշխիչ և գազակարգավորիչ չափիչ կայաններ:

Միայն 2009 թվականին Շիրակում գազաֆիկացվել է **26 համայնք**. ավելի քան **21 հազար շիրակցի բնական գազից օգտվելու հնարավորություն է ստացել**: 2009-2011 թվականներին իրականացված աշխատանքների արդյունքում այժմ ամբողջովին գազաֆիկացված է **Ամասիա** համայնքը: Գազաֆիկացվել են Գյումրի քաղաքի նորակառույց թաղամասերը:

2007-2011 թվականներին Շիրակի մարզում իրականացվել են ծավալուն ճանապարհաշինարարական աշխատանքներ, ընդ որում, 2011 թվականին՝ **ավելի մեծ ծավալով**, քան նախորդ չորս տարիներին միասին:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են **Գյումրի-Կապս-Ամասիա, Հոռոմ-Սարատակ-Լուսակերտ, Ամասիա-Պաղակն-Զորակերտ, Հոռոմ-Հայրենյաց** ճանապարհները: Վերջին տարիներին Հայաստանում առաջին անգամ կիրառված ավազակոպճային տեխնոլոգիայով ամբողջապես հիմնանորոգվել է **Սալուտ-Բաշգյուղ-Փոքր Սարիար-Կաքավասար-Սարապատ-Զորաշեն** տասնամյակներ շարունակ չնորոգված 24 կիլոմետր երկարությամբ հատվածը: Հիմնանորոգվել են **Գյումրի-Ախուրյան**՝ 4 կիլոմետր, **Բասեն-Հովիտ**՝ 1.5 կիլոմետր և **Ղարիբջանյան-Ախուրիկ** 2.6 կիլոմետր երկարությամբ մարզային նշանակության ավտոճանապարհները:

Հիմնանորոգվել են **Ամասիա, Բերդաշեն, Զորակերտ, Ծաղկուտ, Գառնարիճ, Շաղիկ, Ոսկեհասկ, Սարակապ** համայնքների միջհամայնքային մարզային նշանակության ճանապարհները:

«Մի տարի առաջ էստեղ սարսափելի վիճակ էր. էս գազակետում դաժե հրաժարվեին գը տեղական տուրքը վճարելուց, ասում էին՝ գործ չկա, աշխատանք չկա, մեր մոտ լիցքավորող չկա: Հիմա, փառք Աստծո, ճանապարհը սարքվել է, մարդիկ գոհ ու շնորհակալ են: Շնորհակալություն Հանրապետության նախագահին, որ իր խոստումը կատարեց: Նորմալ ճանապարհը սարքվել է, հիմնական քաղաք մտնող մուտքը՝ ասֆալտապատվել: Բոլորը գոհ ու շնորհակալ են»:

Հրանտ Ղազոյան, Արթիկի բնակիչ

«Երեսուն տարի է Սևյան թաղամասը կապրիմ, Ղանդիլյան փողոցը մե իսկական խայտառակ բանմ էր, իսկական անեծքաբուն: Քսաներեք տարի է սարքող չկար: Վերջին տարիներին ոչ տաքսիները կմտնեին թաղ, ոչ գազելները գուզեին աշխատել: Վախտ է եղել, մառշռուտնին հասել է կռուգ, պասաժիռին բրախել է, թե գնացեք, մենք առաջ էրթացողը չենք: Հըմի ինչխոր ասֆալտապատել են անցյալ տարվանից, ամեն ինչ լավ է: Մարդիկ վերջապես կտրան էդ թոզից, ավտոներն էլ փոսերից: Թե չէ ժիգուլին, որ կմտներ էդ փոսը անձրևից հետո, կդառնար պադվոդնի լոդկա: Հըմի փառք Աստծո, ավտոն ավտոյի նման կքշե, մարդիկ էլ իրանց համար մայթերով հանգիստ ման գուկան: Ապրին ասֆալտ էնողները»:

Գագիկ Հարությունյան, Գյումրիի բնակիչ

Ասֆալտապատման աշխատանքներն իրականացվում են գերժամանակակից տեխնիկայի օգնությամբ

Ասֆալտապատվել են **Գյումրի** քաղաքի տարիներ շարունակ մարդաբոյ փոսեր ունեցող՝ **Ղանդիլյան, Լիսինյան, Իսահակյան, Պռոշյան, Արթիկի՝ Շահումյան, Բաղրամյան** փողոցները: Փողոցներ հիմնանորոգվեցին **Մարալիկում, Ամասիայում, Աշոցքում, Ջաջուռում, Հառիճում: Մեծ Մանթաշ** և **Արգենադեմ** համայնքներում հիմնանորոգվել են կամուրջներ:

Հիմնանորոգվում են **Ամասիա** համայնքի հանրապետական նշանակության երկուսուկես կիլոմետր երկարությամբ ճանապարհահատվածն ու ներհամայնքային ճանապարհները:

Շիրակում մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման և շահագործման նպատակով 2010 թվականին տրամադրվել է շուրջ **60 տոկոսով** ավելի ֆինանսավորում, քան երկու տարի առաջ՝ 2008 թվականին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **«Շիրակ» օդանավակայանը** կոնցեսիոն կառավարման է հանձնվել **«Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.»** ձեռնարկությանը, որը Լատինական Ամերիկայում, Եվրոպայում և Հյուսիսային Աֆրիկայում կառավարում է շուրջ հիսուն օդանավակայան և բեռնափոխադրումների հանգույցներ, ճանապարհների հարյուրավոր կիլոմետրեր, էներգետիկ ձեռնարկություններ, մշակում հարյուր հազարավոր հեկտար հողատարածություններ: «Շիրակ» օդանավակայանը ներկայում օդային կապ է ապահովում ԱՊՀ երկրների հետ, և հնարավորություն ունի ընդունել ցանկացած տեսակի ինքնաթիռ: Ներդրումների արդյունքում վերանորոգվել է թռիչքուղին, տեղադրվել է ազդանշանային համակարգ, իսկ շահագործման հանձնելու օրը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ICAO) **օդանավակայանին շնորհել է առաջին կարգ**: «Շիրակ» օդանավակայանը եղանակային վատ պայմանների դեպքում այլընտրանքային օդանավակայան է «Զվարթնոց»-ի և Թբիլիսիի օդանավակայանի համար: Մինչև 2011 թվականը «Շիրակ»-ից կանոնավոր չվերթներ են իրականացվել Դոնի Ռոստով, Մոսկվա, Մինվոդի, Կրասնոդար և այլ ուղղություններով: «Շիրակ» օդանավակայանը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության օդանավերի վայրեջքներն ու թռիչքները սպասարկում է անվճար:

Տունը

Շիրակի մարզում 1998 թվականից ի վեր բնակարանային ֆոնդը հետևողականորեն ընդլայնվել է: 2011 թվականին Շիրակի մարզում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 1998 թվականի համեմատ **ավելացել է 70**, իսկ 2003 թվականի համեմատ՝ **ավելի քան 40 տոկոսով**:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Շիրակի մարզում

Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում բնակարանային ֆոնդը մեծացել է էլ ավելի մեծ թափով: Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերում բնակարանային ֆոնդի ավելի քան 11 տոկոսը Շիրակի մարզում է: Շիրակում է հանրապետության գյուղական բնակավայրերի **ամենամեծ բնակարանային ֆոնդը՝** Արմավիրի ու Արարատի մարզերից հետո:

2011 թվականին բնակարանային ֆոնդի մակերսը Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում 1998 թվականի կրկնապատիկն է, իսկ 2003 թվականի համեմատ ավելացել է շուրջ երեք քառորդով:

Շիրակի մարզում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2011 թվականին 1999 թվականի համեմատ **եռապատկվել է**, իսկ 2004 թվականի համեմատ **ավելացել է մեկ երրորդով:**

Շիրակի մարզի գյուղական համայնքներում մեկ բնակչի ապահովվածութ-

Գյուղական բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Շիրակի մարզում

2011 թվականին Շիրակի մարզի գյուղական համայնքներում ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությունը 1998 թվականի եռապատիկն է և շուրջ 70 տոկոսով ավելի է, քան 2003 թվականին:

յունն ընդհանուր մակերեսով **երրորդ ամենաբարձրն է** հանրապետությունում՝ զիջելով միայն Արմավիրի և Վայոց Ձորի մարզերին: 2011 թվականին Շիրակի

Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2011թ. (քառ. մ)



մարզի գյուղական համայնքներում ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությունը հանրապետական միջինը գերազանցում էր շուրջ 17 տոկոսով: Թեպետ աղետալի երկրաշարժի ավերումների հետևանքով Շիրակի մարզի քաղաքներում ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությունը հանրապետության քաղաքային բնակավայրերում զիջում է հանրապետական միջին ցուցանիշին շուրջ 17 տոկոսով, այդուհանդերձ, ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությունը Շիրակի մարզում **անշեղորեն աճել է** նախորդ տասնամյակում: 2011 թվականին 2000 թվականի համեմատ Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերում ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությունը **եռապատկվել է**, իսկ 2003 թվականի համեմատ ավելացել է շուրջ 20 տոկոսով:

Քաղաքային բնակավայրերում բազմաբնակարան շենքերի բնակարանների թվաքանակը Շիրակի մարզում մեծությամբ հանրապետության **երրորդն է**: 2002-2011 թվականներին հանրապետության քաղաքային բնակավայրերում բազմաբնակարան շենքերի բնակարանների թվաքանակի **աճի ամենամեծ տեմպը** Շիրակի մարզում է. 2011 թվականին 2002 թվականի համեմատ քաղաքային համայնքներում բնակարանների թիվն ավելացել է մեկ քառորդով, մինչդեռ նույն ժամանակահատվածում Երևանում և հանրապետության քաղաքային բնակավայրերում բնակարանների թվաքանակն ավելացել է միջինում յոթ տոկոսով: Նույն ժամանակահատվածում Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերում բազմաբնակարան շենքերի ընդհանուր մակերսն ավելացել է շուրջ

Քաղաքային բնակավայրերում գտնվող բնակելի տների և բազմաբնակարան շենքերի ընդհանուր մակերեսի փոփոխությունը ՀՀ մարզերում



մեկ երրորդով, մինչդեռ մայրաքաղաք Երևանում բնակարանների ընդհանուր մակերեսն ավելացել է միայն յոթ, իսկ հանրապետության քաղաքային բնակավայրերում՝ միջինում հինգ տոկոսով: 2002 թվականի համեմատ՝ Շիրակի մարզի քաղաքային համայնքներում 2011 թվականին բնակելի տների (առանձնատների) քանակն ավելացել է տասը տոկոսով, իսկ ընդհանուր մակերեսը՝ գրեթե ութ տոկոսով:

2011 թվականին Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում առանձնատների քանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է մեկ քառորդով**, մինչդեռ հանրապետության գյուղական բնակավայրերում առանձնատների քանակը միջինում ավելացել է շուրջ 17 տոկոսով: Նույն ժամանակահատվածում առանձնատների ընդհանուր մակերեսը Շիրակի գյուղական բնակավայրերում ավելացել է շուրջ **80 տոկոսով**, մինչդեռ հանրապետության գյուղական բնակավայրերում առանձնատների ընդհանուր մակերեսն ավելացել է **60 տոկոսով**:

Շիրակի մարզում նախորդ տասնամյակում **աննախադեպ ակտիվացել է** անշարժ գույքի շուկան: 2010 թվականին Շիրակի մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների թիվը 2001 թվականի համեմատ **եռապատկվել է**: 2010 թվականին Շիրակի մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքները մարզերում քանակով զիջում են միայն Կոտայքին:

2010 թվականին Շիրակի մարզում հողերի, այդ թվում՝ գյուղատնտեսական

2010 թվականին Շիրակի մարզում առանձնատների առուվաճառքի գործարքների թիվը 2001 թվականի համեմատ յոթնապատիկ է, իսկ 2005 թվականի համեմատ ավելի է մեկուկես անգամ:

նշանակության, առուվաճառքի **հնգապատիկ մեծ թվով** գործարքներ են իրականացվել, քան 2002 թվականին:

Ընդհանուր առմամբ, անշարժ գույքի առուվաճառքի շուկան Շիրակի մարզում 2010 թվականին շուրջ մեկուկես անգամ ավելի ակտիվ էր, քան 2002 թվականին:

Շիրակի մարզում 2010 թվականին կատարվել են համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության ավելի մեծ թվով գործարքներ, քան հանրապետության որևէ այլ մարզում: 2010 թվականին Շիրակում

վարձակալվել են համայնքների գյուղատնտեսական նշանակության **ավելի մեծ մակերեսով հողատարածքներ, քան հանրապետության որևէ այլ մարզում**, ավելի մեծ մակերես, քան հանրապետության **յոթ մարզերում միասին վերցրած**: Վարձավճարների մուտքերը մեծապես նպաստել են համայնքների բյուջեների եկամուտների մեծացմանը և ուղղվել են Շիրակի համայնքների կարիքները հոգալուն: 2010 թվականին Շիրակի մարզում ֆերմերները վարձակալել են եռապատիկ ավելի մեծ մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, քան 2006 թվականին:

2010 թվականին Հայաստանի համայնքներում վարձակալված գյուղատնտեսական նշանակության հողատարածքների յուրաքանչյուր երեք հեկտարից մեկը վարձակալվել է Շիրակի մարզում:

Համայնքների և գյուղական նշանակության վարձակալված հողերի մակերեսը ՀՀ մարզերում, 2010թ. (հա)



Նախորդ տասնամյակում տարբեր միջոցներով վերականգնվել է աղետի գոտու բնակելի ֆոնդի զգալի մասը: Շիրակի մարզում 1989 թվականից մինչ օրս կառուցվել է շուրջ 19,500 բնակարան, որոնցից շուրջ 18,000-ը՝ Գյումրիում, հիմնովին վերանորոգվել են 20 մշակութային կենտրոններ:

Ավերիչ երկրաշարժից քսան տարի անց Շիրակի մարզում անօթևանների թիվը հասնում էր շուրջ 4250-ի: Հանրապետության նախագահի անմիջական նախաձեռնությամբ անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովելու նպատակով Գյումրի քաղաքում մեկնարկել են շինարարական աշխատանքներ:

Շիրակի մարզում 2007 թվականին կրկին թափ է առել բնակարանաշինությունը: 2007-2011 թվականներին Շիրակում իրականացվել են ավելի քան 47.3 միլիարդ դրամ ընդհանուր ծավալով բնակարանաշինության աշխատանքներ: Շիրակի մարզում 2007-2011 թվականներին կատարված կապիտալ ներդրումների կեսից ավելին՝ շուրջ 52 տոկոսը, ուղղվել է հենց բնակարանաշինությանը:

Հանրապետության մարզերում բնակարանաշինության ծրագրերում 2007-2011 թվականներին կատարված ներդրումների ավելի քան 60 տոկոսը հատկացվել է Շիրակի մարզին: 2007-2011 թվականներին Շիրակի մարզում կատարվել են ավելի մեծ ծավալի ներդրումներ, քան հանրապետության բոլոր մարզերում միասին:

Բնակարանաշինությանն ուղղված ներդրումների ծավալների համեմատականը, 2007-2011թթ



Շիրակի մարզում բնակարանաշինությանն ուղղված կապիտալ ներդրումների 90 տոկոսից ավելին հատկացվել է հանրապետության մարզերում ամենամեծ քաղաքին՝ **Գյումրիին**: Բնակարանաշինության ծրագրեր են իրականացվել Շիրակի **26 համայնքներում՝ Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքներում, Լեռնուտ, Կառնուտ, Արևիկ, Ջրառատ, Ղազանչի, Հառիճ, Շիրակ, Գետք, Գեղանիստ, Բենիամին, Անիպեմզա, Բայանդուր,**

«Մուշ 2» թաղամասի
կառուցումն ու բնակեցումը

«Բոլորը նորմալ է՝ մանրահատակն էլ, պատուհաններն էլ, պատերն էլ, դռներն էլ. հաճելի ապրելու վայր է, որ մտնես ու ապրես: Ջուրն էլ կա, գազն էլ կա: Ինչ էլ որ փոքր թերություն կա, մենք կասենք, իրենք վռազ կուղղեն»:

Լաուրա Հարությունյան, Մուշ-2 թաղամասի բնակչուհի

«Տանիքը ահավոր վիճակի մեջ էր, անընդհատ կաթոցներ, վերանորոգում չի եղել, վերանորոգումը մեր ուժերով ինչքան կարողացել, արել ենք: Հա էլ ասել էին, թե կվերանորոգեն: Հիասթափվել էի: Հետո իրոք սկսեց վերանորոգումը: Ես ուշի-ուշով հետևում էի: Էդ լավ բաները տեսել եմ. կաթոց չկա, ճտոց չկա, ամեն ինչ լավ է: Էնպես որ ես էնքան շնորհակալ եմ, որ թոռներս կուգան, հավաքվին, ապահով կնստինք, ես ինձ կծկված չեմ զգա, թե հիմի էլի ճտոցը կգա՝ անձրև է, ձյուն է, և այլն»:

Լենա Սարգսյան, Արթիկի բնակչուհի

Մուշ-2 թաղամասի նորակառույցներից մեկում է ապրում Ռիտա Քոչարյանի երեք անձից բաղկացած ընտանիքը: Առաջին հարկի երկու սենյականոց բնակարանը վիճակահանության արդյունքում բաժին էր հասել հենց նրանց: Ամուսնու ընտանիքը 21 տարի ապրել է «Երկաթգծի նորավան» թաղամասում տեղակայված տնակներից մեկում: 42-ամյա Ռիտան էլ, «դոմիկից»-«դոմիկ» հարս գնացած բազմաթիվ գյումրեցի կանանց նման, թաքուն հույս է փայփայել, որ մի օր ազատվելու է «դոմիկային» կենցաղավարությունից: Ամուսինը շինարար էր, սակայն սեփական միջոցներով տուն կառուցելը ավելի շուտ ֆանտաստիկայի ժանրից էր. չկային բավարար միջոցներ: Ստիպված էին համբերել, մինչև պետությունն իր տված խոստումը կկատարեր:

Ստացած բնակարանից Քոչարյանները գոհ են: Շատ մեծ, արտառոց թերություններ չեն հայտնաբերել: Բնակարանը ստանալուց հետո մեկ անգամ թեթևակի վերանորոգել են: Ռիտայի ամուսինը հիշում է խորհրդային տարիները, երբ բնակարան ասվածն ընդամենը պատերն էին ու մարդիկ ամեն մեկն իր ճաշակով հետագայում «ռեմոնտ» էր անում: «Հիմի փառք Աստծո, ինչ է եղել, ամեն ինչ նորմալ մեջը կա, ջեռուցումը քաշած է, բաղնիք զուգարանը իրա էղացածով կա,– ասում է Ռիտա Քոչարյանը,– մի քիչ ջրի խնդիրն է վատ, օրվա մեջ 6 ժամ ենք ունենում, օր էլ կա չի լինում, բայց կարծում եմ դա էլ կկարգավորվի: Շենքի առումով կարևորը հիմքերն ու պատերն են, եթե ամուր է, մնացած մանր-մունր թերությունները կարելի է և ձեռքի հետ վերացնել, խնդիր չկա»:

Ռիտան պատմում է, որ առաջիններից մեկն են եղել, որ շտապել են տեղափոխվել նոր բնակարան: «Դե մենք արդեն վիճակահանությամբ շենքն ու բնակարանը գիտեինք, արդեն լուսամուտների ճաղավանդակները պատվիրել էինք, հենց բանալիները ստացանք, հաջորդ օրը տեղափոխվեցինք: 50 քմ է ընդհանուր մակերեսը, մի քիչ խոհանոցի փոքրությունից եմ նեղվում: Մտածում եմ, որ կահույք պատվիրեմ, որտեղ եմ դնելու, մի պահարանից ավելի չի տեղավորվում: Մնացածի առումով 3 հոգանոց ընտանիքի համար նորմալ է, հարմարվել ենք: Աղջիկս էլ թաղամասի դպրոցն է հաճախում, որ մեզ շատ մոտ է: Առայժմ, որ գոհ ենք»,– ծիծաղում է տիկին Ռիտան:

Կինը պատմում է, որ սկզբնական շրջանում, երբ նոր էին տեղափոխվել, տեղում անգամ հաց գնելու հնարավորություն չունեին: Մեկ տարի անց թաղամասում արդեն 4 խանութ-տաղավար է հայտնվել, անգամ վարսավիրանոց է բացվել: «Դե կամաց-կամաց զարգանում ենք: Եթե բնակարան ստացածները բոլորը գային ապրեին, կարծում եմ ավելի շուտ ամեն ինչ կկարգավորվեր,– ասում է տիկին Ռիտան,– լիքը բնակարաններ կան փակ, մի մասն էլ էստեղ վարձով են մնում: Մեր մուտքում, օրինակ, 12 բնակարանից 5-ում են ապրում, որից 2-ում վարձով են բնակվում: Ցավոք, բնակչության 1/3-ն է դեռ ապրում թաղամասում: Պիտի բոլորը գան, որ զարգացման մասին էլ խոսք գնա»:

Պեմզաշեն, Վահրամաբերդ, Փոքրաշեն, Գետափ, Աշոցք, Լուսաղբյուր, Անիավան, Կրաշեն, Ամասիա, Առափի, Ախուրյան:

Կառուցվել են բնակելի բազմաբնակարան շենքեր ու առանձնատներ, բարեկարգվել են թաղամասեր, հիմնանորոգվել են բազմաբնակարան շենքեր, տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր:

2009-2010 թվականներին **Գյումրի** քաղաքի **«Մուշ-2»** թաղամասում կառուցվել են **22 բազմաբնակարան բնակելի շենքեր**, որոնք ինը բալ սեյսմակայունություն ունեն: Նորակառույց բնակելի շենքերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած **1,056 ընտանիքների հատկացվել է բնակարան**, այդ թվում՝ մեկ սենյականոց՝ **440**, երկու սենյականոց՝ **352** և երեք սենյականոց՝ **264** բնակարաններ, որոնք ապահովված են կոմունալ բոլոր անհրաժեշտ պայմաններով, բակերում կառուցվել են խաղահրապարակներ, տարածքը կանաչապատվել է և ապահովվել գիշերային լուսավորությամբ:

2011-2012 թվականներին **Գյումրիի «Մուշ-2»** և **«Անի»** թաղամասերում կառուցվել է **38 բազմաբնակարան բնակելի շենք** և անօթևան ընտանիքներին է հանձնվել **1,856 բնակարան**: **Ախուրյան** համայնքում կառուցվել է **երեք բազմաբնակարան բնակելի շենք** և **108** անօթևան ընտանիքների տրամադրվել բնակարան: **Մարալիկ** քաղաքում կառուցվել է **մեկ** բազմաբնակարան բնակելի շենք և **20** ընտանիքի տրամադրվել է բնակարան:

2011 թվականին Գյումրիի **«Մուշ-2»** թաղամասում բնակարան են ստացել զոհված զինծառայողների ութ անօթևան ընտանիքներ: Մինչ 2013 թվականը կառավարությունը բնակարանով կապահովի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բոլոր կարիքավոր ընտանինքներին:

2007-2011 թվականներին Շիրակի մարզի **երեք** քաղաքային և **վեց** գյուղական՝ **Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Ախուրյան, Անիպեմզա, Պեմզաշեն, Աշոցք, Անիավան, Ամասիա** համայնքներում հիմնանորոգվել են ընդհանուր առմամբ **156 բազմաբնակարան շենքերի** տանիքները: Առափի համայնքում սողանքային գոտում բնակվող տասնմեկ ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով բնակելի տների ձեռքբերման համար հատկացվել է **44 միլիոն դրամի** ֆինանսական աջակցություն:

Աշխատանքը

Շիրակի մարզում տնտեսության տարբեր ոլորտներում զբաղված քաղաքացիների թիվը նախորդ տարիներին աճել է ընդհուպ մինչև 2008 թվականը: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով զբաղվածների թվի նվազումը, 2010 թվականից սկսած, կրկին փոխակերպվել է աճի, ընդ որում գյուղատնտեսության մեջ զբաղված շիրակցիների թիվը սկսել է աճել 2009 թվականից. **2010 թվականին գյուղատնտեսության մեջ զբաղվածների միջին տարեկան թիվը նախաճգնաժամային 2007 թվականին զբաղվածների միջին թվին գերազանցում էր շուրջ յոթ տոկոսով**, մասնավորապես՝ մարզում վերամշակող արտադրության զարգացման և կայուն աշխատատեղերի ստեղծման արդյունքում: 2010 թվականին ծառայությունների ոլորտում զբաղվածների միջին տարեկան թվով Շիրակի մարզը զիջում էր միայն մայրաքաղաք Երևանին և Լոռու մարզին: Շիրակի մարզը հանրապետությունում **երկրորդն է** պետական հատվածում զբաղվածների թվով: Շիրակի մարզում 2010 թվականին զբաղվածների 18 տոկոսը աշխատում էր պետական հատվածում:

Զբաղվածների քանակը ՀՀ մարզերում (միջին տարեկան, հազար մարդ)



2009-2011 թվականներին Գյումրիի «Մուշ-2» թաղամասի շինհրապարակում ավելի քան **700 մարդ է աշխատել**. շինարարներից շատերը, կատարելով իրենց աշխատանքային ծավալները, միջինում վաստակել են ամսեկան **200-325 հազար դրամ**:

Կրթությունը

Շիրակի մարզում 2007 թվականից սկսած, տարեց-տարի ավելացել է նախադպրոցական հաստատություններում նախկինում նվազող տեղերի թիվը. 2010 թվականին 2007 թվականի համեմատ նախադպրոցական հաստատություններում տեղերի թիվը Շիրակի մարզում ավելացել է մեկ երրորդով:

Նախադպրոցական հաստատություններում տեղերի քանակը Շիրակի մարզում



Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների քանակը Շիրակի մարզում



2001 թվականից աճել է նաև նախադպրոցական հաստատություններ հաճա-

խող երեխաների թիվը: 2010 թվականին Շիրակի մարզում նախադպրոցական հաստատություններ հաճախում էր **40 տոկոսով ավելի երեխա**, քան 2001 թվականին: Մեկ նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների թիվը Շիրակի մարզում նույնպես բարձր է հանրապետության միջինից: Ընդ որում, եթե 2001 թվականին մեկ նախադպրոցական հաստատություն Շիրակի մարզում հաճախում էին միջինում 50 երեխա, ապա 2010 թվականին արդեն՝ ավելի քան 80 երեխա:

Նախադպրոցական հաստատություններում աշխատող մանկավարժների թվով Շիրակը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին և Կոտայքի մարզին:

2010 թվականին Շիրակի մարզում նախադպրոցական հաստատություններում մանկավարժների թիվը **մեկուկես անգամ ավել է** 2002 թվականի համեմատ:

Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 100 տեղի հաշվով 2010 թվականին կազմել է ավելի քան 92՝ զիջելով միայն Կոտայքի մարզին, ինչը վկայում է մարզում նախադպրոցական հաստատությունների ցանցի օպտիմալ և համաչափ աստիճանական զարգացման մասին: Հետագա տարիներին Շիրակի մարզում նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկման աստիճանի մեծացմանը զուգահեռ, հետևողականորեն կավելանա նաև նախադպրոցական հաստատությունների, դրանցում տեղերի և մանկավարժների թիվը:

Նախադպրոցական հաստատություններում անհրաժեշտ թվով մանկավարժների ներգրավումը, հաճախող երեխաների թվի մեծացմանը զուգընթաց, հնարավորություն է ընձեռել ապահովել երեխաների պատշաճ խնամքն ու դաստիարակությունը. մեկ մանկավարժի հաշվով երեխաների թվաքանակը Շիրակում ավելի քան քառասուն տոկոսով ցածր է հանրապետության միջինից և **ամենանպաստավորներից մեկն է** հանրապետության մարզերում: 2010 թվականին մեկ մանկավարժի հաշվով երեխաների թվաքանակը մարզում 2005 թվականի համեմատ նվազել է շուրջ մեկ քառորդով:

Շիրակի մարզի նախադպրոցական հաստատություններում աստիճանականորեն նվազել են երեխաների հիվանդացության դեպքերը. 2010 թվականին

Նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերի քանակը Շիրակի մարզում



2006 թվականի համեմատ մարզի նախադպրոցական հաստատություններում երեխաներն ավելի **քան մեկ երրորդով քիչ են հիվանդացել**: Եթե 2001 թվականին Շիրակի մարզում նախադպրոցական հաստատություն հաճախող յուրաքանչյուր հարյուր երեխա միջինում հիվանդացել է տարեկան ավելի քան 150 անգամ, ապա 2010 թվականին՝ **50-ից պակաս**: Ընդ որում, 2010 թվականին հանրապետությունում նախադպրոցական հաստատություն հաճախող հարյուր երեխայի հաշվով հիվանդացության դեպքերի թիվը միջինում կազմել է 67, իսկ մայրաքաղաք Երևանում՝ 60:

Նախադպրոցական հաստատություն հաճախող մեկ երեխայի հաշվով հիվանդացության դեպքերի թիվը Շիրակի մարզում 2010 թվականին 2001 թվականի համեմատ նվազել է եռապատիկ:

2011 թվականին Շիրակի մարզում նախադպրոցական տարիքի երեխանների ավելի քան **մեկ երրորդն ընդգրկված էր** նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

2007-2011 թվականներին նախադպրոցական հաստատություններ են հիմնանորոգվել և վերանորոգվել **Գյումրի** և **Արթիկ** քաղաքներում, **Ոսկեհասկ**,

Հայկավան և **Ամասիա** համայնքներում: Շիրակի մարզի մի շարք նախադպրոցական հաստատություններ ապահովվել են գույքով:

2011 թվականին **Ամասիա** համայնքում վերակառուցվել է մանկապարտեզի շենքը: Համայնքն այսօր ունի **60 երեխայի համար նախատեսված մանկապարտեզ**: Վերակառուցված շենքն ունի նաև 80 հոգու համար նախատեսված հանդիսությունների դահլիճ, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել նաև համայնքային նշանակության հանդիսություններին ու տոնակատարություններին: Մանկապարտեզն ունի **սեփական համակարգչային կենտրոն**, ինչը եզակի է հանրապետության մարզերում:

Ախուրյանի տարածաշրջանի **տասներեք գյուղական համայնքների** դպրոցներում՝ 14 խմբերում, 370 երեխայի ընդգրկումով հանրապետությունում առաջին անգամ ներդրվեց **«Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին»** կրթական ծրագիրը: Դրա հաջողությունն ապահովեց, որ ծրագրի հետագա ֆինանսավորումը շարունակվի պետական բյուջեի միջոցների հաշվին: 2011 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ծրագրի ֆինանսավորմանն արդեն հատկացվել է շուրջ **40 միլիոն դրամ**:

Շիրակի մարզում նախադպրոցական հաստատությունների 30 դաստիարակներ վերապատրաստվել են՝ ստանալով բարձր որակավորում:

Հանրապետության մարզերի մակարդակով հանրակրթական դպրոցների **ամենամեծ թվով մանկավարժները** եղել և մնում են Շիրակի մարզում. ընդ որում, եթե ընդհուպ մինչև 2009/2010 ուսումնական տարին Շիրակում, ինչպես և ողջ հանրապետությունում մանկավարժների թիվն աստիճանականորեն կրճատվել է, 2010 թվականից սկսած մանկավարժների թիվը Շիրակում ավելացել է 60-ով:

Շիրակի մարզում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների թիվն

Հանրապետության մարզերի թվում Շիրակում են ամենաշատ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները:

Մանկավարժների քանակը ՀՀ մարզերում, 2011թ



Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտնե-րի թվաքանակը Հայաստանում 100,000 բնակչի հաշվով, 2011թ.



աստիճանականորեն ավելացել է. 2010/2011 ուսումնական տարում Շիրակում գործում էին մեկուկես անգամ ավելի շատ նման հաստատություններ, քան 2001/2002 ուսումնական տարում:

Միլիոնանոց քաղաքամայր Երևանում 2011 թվականին գործել են 45 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, մինչդեռ քառակի պակաս բնակչություն ունեցող Շիրակի մարզում՝ 27 նման հաստատություն. հարյուր հազար բնակչի հաշվով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների թիվը Շիրակի մարզում **կրկնակի ավելի է** քան Երևանում և **քառասուն տոկոսով** ավելի, քան միջինը հանրապետությունում:

2010/2011 ուսումնական տարում Շիրակի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում անվճար և վճարովի ուսուցման համակարգերում սովորել է շուրջ **մեկ քառորդով ավելի** աշակերտ, քան 2007/2008 ուսումնական տարում: Շիրակի մարզը հանրապետության մարզերի թվում **երրորդն է** 2010/2011 ուսումնական տարում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորողների թվաքանակով:

Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում անվճար ուսուցման համակարգում սովորողների թիվն **ամենամեծն է** Շիրակի մարզում՝ Արարատի մարզից հետո: Կենսական պահանջներից առավել՝ շիրակցին կարևորում է ստեղծագործելու հնարավորությունն ու ստեղծագործ սկիզբը: Շիրակի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում տարեց-տարի ավելացել է ուսուցման վճարովի համակարգում սովորողների տեսակարար կշիռը. 2001/2002 ուսումնական տարում անվճար համակարգում սովորում էր աշակերտների շուրջ երկու երրորդը, այնինչ 2010/2011 ուսումնական տարում սովորողների երկու երրորդը վճարում է ուսուցման համար:

Դպրոցամուտ Նոր Կյանք համայնքում

2010 թվականից Հայաստանի մարզերում **ամենից շատ** նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ գործում են Շիրակի մարզում՝ վեցը, մինչդեռ դեռևս 2008 թվականին դրանք ընդամենը չորսն էին: Շիրակում գործում են **ավելի շատ** արհեստագործական ուսումնական հաստատություններ, քան հանրապետության չորս մարզերում միասին վերցրած: Արհեստագործական ուսումնական հաստատությունների թվով

Հանրապետության մարզերում արհեստագործական ուսումնական հաստատություններում սովորողների գրեթե մեկ երրորդը Շիրակի մարզում է:

Նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակը ՀՀ մարզերում, 2010թ.



Շիրակի մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին:

Հանրապետության մարզերի արհեստագործական ուսումնական հաստատություններում **ամենաշատ** սովորողները հենց Շիրակում են: Շիրակի մարզում արհեստագործական ուսումնական հաստատություններում սովորում են ավելի շատ ուսանողներ, քան հանրապետության հինգ մարզերում միասին:

Շիրակի մարզում, Երևանից հետո, ամենամեծն է նաև արհեստագործական ուսումնական հաստատությունների մանկավարժների թվաքանակը հանրապետությունում, Երևանից հետո, դրանք **ամենաբազմաքանակն են** Շիրակի մար-

զում: 2010 թվականին արհեստագործական ուսումնական հաստատությունների մանկավարժների թիվը 2008 թվականի համեմատ Շիրակում ավելացել է շուրջ մեկ երրորդով:

Հանրապետության մարզերի թվում **ամենաշատ** միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ գործում են Շիրակի մարզում: 2010 թվականին միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը Շիրակի մարզում 2000 թվականի համեմատ ավելացել է **մեկ երրորդով**: Հարյուր հազար բնակչի հաշվով հանրապետությունում ամենաշատ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ գործում են Շիրակի մարզում՝ ավելին, քան որևէ մարզում, քան մայրաքաղաք Երևանում:

Հանրապետության մարզերի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների **ամենամեծ թիվը Շիրակում է**: Ընդ որում, 2002-2010 թվականներին աստիճանականորեն ավելացել է պետական աջակցությունը սովորողներին. նշված ժամանակահատվածում ուսուցման անվճար համակարգ ընդունված սովորողների տեսակարար կշիռն ավելացել է շուրջ քառասուն տոկոսով:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակը ՀՀ մարզերում, 2010թ.



Շիրակի մարզը Հայաստանում առաջինն է նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժների թվով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնաճյուղերի թվով Շիրակը գերազանցում է հանրապետության բոլոր մարզերին:

Շիրակի մարզի երեք բարձրագույն ուսումնական հաստատություններում և երեք մասնաճյուղերում սովորող ուսանողների թվաքանակն **ամենամեծն է** հանրապետության մարզերի համեմատ: Շիրակում են սովորում հանրապե-

2010/2011 թվականներին Շիրակի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել են քառապատիկ ավելի ուսանող, քան 2002/2003 թվականներին:

տության մարզերի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների մեկ երրորդից ավելին՝ 36 տոկոսը: Շիրակի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում է **գրեթե նույնքան** ուսանող, որքան հանրապետության **ութ այլ մարզերում միասին**: Շիրակի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում և մասնաճյուղերում սովորող յուրաքանչյուր տասը ուսանողից ինը վճարում է սեփական կրթության համար:

Շիրակի մարզում բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմը թվաքանակով **ամենա-**

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակը Շիրակի մարզում, 2010թ.



բազմամարդն է հանրապետության մարզերի համեմատ. Շիրակում են հանրապետության մարզերի բարձրագույն ուսումնական հաստատությունների մանկավարժների **ավելի քան մեկ երրորդը**: Շիրակի մարզում բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի գրեթե վաթսուն տոկոսը կանայք են. Շիրակում է բարձրագույն կրթության ոլորտում կանանց ամենաբարձր ներգրավվածությունը, այն դեպքում, երբ մայրաքաղաք Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող կանայք պրոֆեսորադասախոսական անձնակազմի կեսը չեն կազմում անգամ:

Հանրապետության մարզերում կրթական հաստատությունների հիմնանորոգմանն ու արդիականացմանն ուղղված ներդրումների շուրջ 14 տոկոսը հատկացվել է Շիրակի մարզի նախադպրոցական և հանրակրթական հաստատություններին:

2007-2011 թվականներին Շիրակի մարզում իրականացվել են դպրոցաշինության աննախադեպ մեծածավալ աշխատանքներ. մարզի երեք քաղաքներում և գյուղական 43 համայնքներում նախագծվել, կառուցվել, հիմնանորոգվել, վերանորոգվել, բարեկարգվել ու վերազինվել են շուրջ 70 հանրակրթական հաստատություններ:

Գյումրի, Արթիկ, Ախուրյան, Աղին, Իսահակյան, Փանիկ, Լուսաղբյուր, Սպանդարյան, Շիրակավան, Ձրափի, Այգաբաց համայնքների դպրոցներում կառուցվել են ջեռուցման համակարգեր, Շիրակի մարզի մի շարք դպրոցներում հիմնանորոգվել և վերազինվել են մեկ տասնյակից ավելի դպրոցական մարզադահլիճներ:

Նորոգվել է **Գոգհովիտի** դպրոցը, նոր ուսումնական մասնաշենք է կառուցվել Գյումրիի **Օյունջյան վարժարանի** համար, որտեղ տեղակայվել են դասասենյակները, համակարգչային սրահը, լինգաֆոնային կաբինետն ու նոր մարզասրահը: **Սարակապի** վերակառուցված դպրոցը հնարավորություն ունի ընդունելու **216 աշակերտ**, ունի մարզական և հանդիսությունների դահլիճներ, նոր կաթսայատուն, լուսավորության, օդափոխության, հակահրդեհային և տեսահսկման համակարգեր: Դպրոցն ամբողջովին կահավորվել է, համալրվել կրթական և մարզական գույքով, ինչպես նաև համակարգիչներով: Դպրոցի

մասնաշենքում գործելու է նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 24 երեխայի համար: Վերանորոգվել է **Ամասիա** համայնքի միջնակարգ դպրոցը, հատկացվել են համակարգիչներ, լաբորատորիաներ: Շիրակի մարզի **Արթիկ** քաղաքի 6 դպրոցներում կահավորվել է երկուական դասասենյակ: Միայն 2011 թվականին վերանորոգվել է 12 դպրոց:

Կառուցվում են Գյումրի քաղաքի **«Մուշ-2» թաղամասի**, **Ախուրիկի, Աշոցքի** և **Արեգնադեմի** դպրոցները, շարունակվում են **Մեծ Մանթաշ, Գուսանագյուղ, Հառիճ, Ձիթհանքով** և **Անուշավան** համայնքների դպրոցների հիմնանորոգման աշխատանքները: 2012 թվականին սկսվել է նոր դպրոցական շենքերի կառուցումը **Վարդաքար** և **Ախուրիկ** համայնքներում: **Աշոցքում** կառուցվող դպրոցը դռները կբացի 2013 թվականի գարնանը:

«Մինչև 2010 թվականը մեր դպրոցի պայմանները բավականին բարդ էին, ցուրտ էր, պայմանները չէր բավարարում նորմալ ջեռուցման համար, դպրոցը հագեցած չէր լաբորատոր սարքավորումներով: Իսկ արդեն 2011-ի սեպտեմբերի մեկից մենք մուտք գործեցինք այս նոր դպրոցը, որը հագեցած է ամեն ինչով. և՛ ֆիզիկայի լաբորատոր սարքավորումներով, և՛ քիմիայի: Շատ լավ կաբինետներ ունենք՝ պատմության, մաթեմատիկայի և ռազմագիտության: Հաղիսությունների դահլիճում հաճախակի կազմակերպում ենք շատ բարձր մակարդակի միջոցառումներ: Հագեցած սպորտային դահլիճ ունենք, որը երեխաներին պայմաններ է ստեղծում զբաղվել սպորտով, մրցույթներ են կազմակերպվում հարևան համայնքների հետ, երեխաներ են գալիս, բասկետբոլի խմբեր և այլն»:

Պետրոսյան Աստղիկ, Արևշատի միջնակարգ դպրոցի պատմության և իրավունքի ուսուցչուհի

Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով Շիրակի մարզում **123 դպրոցներ**՝ հանրակրթական հաստատությունների շուրջ երեք քառորդը, գործում են նորակառույց կամ հիմնանորոգված շենքերում:

2012 թվականի տարեսկզբին Շիրակի մարզում լոկալ համակարգով ջեռուցվում էր դպրոցների 70 տոկոսից ավելին. տեղական համակարգով ջեռուցվող դպրոցներում սովորում է շուրջ **21,000 աշակերտ**: Շիրակի մարզի դպրոցների շուրջ 40 տոկոսը՝ 64 հանրակրթական դպրոցներ, ունեն գազաֆիկացված կաթսայից սնվող ջեռուցման համակարգեր, 15 դպրոցների շենքերը դարձյալ ջե-

ռուցվում են լոկալ համակարգով՝ օգտագործելով դիզելային վառելիք: Շիրակի մարզի դպրոցների 30%-ը ջեռուցվում է էլեկտրական էներգիայով:

2012 թվականի տարեսկզբին Շիրակի մարզում բարեկարգված մարզադահիլճ և խաղահրապարակներ ուներ դպրոցների շուրջ **վաթսուն տոկոսը**, նորացված գույք ունեին ութ դպրոցներ, վեց դպրոց համալրված էր արդիականացված լաբորատորիաներով, չորսն ունեին թարմացված գրադարաններ, չորսը՝ վերազինված արհեստանոց, տասներկուսը՝ նոր բուֆետ-ճաշարան:

2012 թվականի տարեսկզբին Շիրակի մարզի **92 դպրոցներ** ունեին համակարգչային դասասենյակներ, **97-ը**՝ դպրոցների կեսից ավելին, ապահովված են ինտերնետային կապով: Շիրակի մարզի դպրոցներում 25 աշակերտի հաշվով առկա է մեկ համակարգիչ, ընդ որում, ըստ հանրապետության միջին ցուցանիշի, մեկ համակարգիչ բաժին է ընկնում շուրջ 30 աշակերտի: Համակարգչային սարքավորումներով Շիրակի մարզի դպրոցների հագեցվածությունը զգալիորեն բարելավվել է 2007-2011 թվականների ընթացքում. դեռևս 2009 թվականին Շիրակի դպրոցներում 31 աշակերտի հասնում էր մեկ համակարգիչ:

Շիրակի մարզում նկատելիորեն **բարձրացել է** նաև հանրակրթական դպրոցների մանկավարժների մասնագիտական **որակավորումը**: 2012 թվականի տարեսկզբի դրությամբ Շիրակի մարզում որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցել է **1,500 ուսուցիչ**՝ մարզում հանրակրթական հաստատությունների մանկավարժների շուրջ կեսը և դպրոցի **120 ղեկավար**, **1,860 ուսուցիչ** տիրապետում է համակարգչին:

Շիրակի մարզի հանրակրթական հաստատություններում ապահովվել է հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **237 աշակերտի** ընդգրկումը ներառական կրթություն իրականացնող դպրոցներ: 2011 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվել է Շիրակի մարզի վեց գյուղական համայնքների դպրոցների շուրջ **160 աշակերտների** տրանսպորտային փոխադրումը:

2011 թվականին Շիրակի մարզի դպրոցների շրջանավարտների շուրջ **40 տոկոսն** ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ: Իրա-

կանացված ներդրումների և աշխատանքների արդյունքում, հանրակրթական ծառայությունների որակից Շիրակի մարզում 2011 թվականին բավարարվածություն են հայտնել յուրաքանչյուր 10 աշակերտներից ու ծնողներից շուրջ 8-ը:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են **Գյումրիի Արհեստագործական դպրոցը**, **Պետական ճարտարագիտական քոլեջը, Նիկոլ Աղբալյանի անվան վարժարանը, Գյումրիի Հայորդաց տունը**, վերակառուցվել և ամրացվել է Հայաստանի պետական տնտեսագիտական ինստիտուտի Գյումրիի մասնաճյուղի ուսումնական մասնաշենքը: Կառուցվում է **«Գյումրիի երեխաների տան»** նոր մասնաշենքը: Համաչափ զարգացել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրիի մասնաճյուղը, ուր պատրաստվում են բարձրորակ ճարտարագետներ տասը մասնագիտությունների գծով:

2011 թվականին Գյումրիում բացվել է ցանցային սարքավորումների արտադրությամբ զբաղվող **«Դ-լինք»** (D-Link) ընկերության տարածաշրջանային հետազոտական կենտրոնը և **ճարտարագիտական-կրթական հետազոտությունների լաբորատորիան,** ուր մեկ տարում ուսում են առել **203 ուսանողներ**:

Գյումրիում գործող ցանցային սարքավորումների արտադրությամբ զբաղվող «Դ-լինք» ընկերության տարածաշրջանային հետազոտական կենտրոնի աշխատակից է Տարոն Սարգսյանը: 36-ամյա տնտեսագետը մի քանի տարի առաջ, եթե ասեին, որ պիտի ծրագրավորող դառնա, հաստատ կծիծաղեր, թեկուզ միայն նրա համար, որ մոտավոր պատկերացում անգամ չուներ, թե ինչ են իրենից ներկայացնում բարձր տեխնոլոգիաները կամ ինչ գործառույթ է իրականացնում ծրագրավորողը: Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում երկու տարի ուսանելուց հետո, նախկին տնտեսագետը 7 ամիս առաջ աշխատանքի է անցել «Դ-լինք» ընկերությունում:

«Ամուսնացած եմ, ունեմ 7-ամյա դուստր: Ես Վահրամաբերդ գյուղից եմ, Գյումրիում վարձով էինք ապրում: Որպես տնտեսագետ 6 ամիս եմ աշխատել Գյումրիի բանկերից մեկում, հետագայում ստիպված էի ընտանիքիս հոգսերը հոգալ արտագնա աշխատանքի միջոցով,-պատմում է Տարոնը,-այս կազմակերպությունում աշխատանք ստանալուց հետո կարողացա նաև հիփոթեքով բնակարան ձեռք բերել քաղաքի կենտրոնում և հիմա ապրում ենք սեփական բնակարանում: Սա լավագույն հնարավորությունն էր, որ կարող էի երազել՝ կայուն աշխատանք, բարձր աշխատավարձ, արժանապատիվ ապրելակերպ»:

Առողջապահությունը

Շիրակի մարզը գերազանցում է հանրապետության բոլոր մարզերին բժիշկների թվով. 2010 թվականին մարզի առողջապահական հաստատություններում աշխատել են ավելի քան 550 բժիշկներ:

Միջին բուժանձնակազմի թվով Շիրակի մարզը նույնպես հանրապետության **մարզերի առաջատարն է**. Շիրակում աշխատում են **ավելի քան 1500 միջին բուժաշխատողներ**: Բժիշկների և միջին բուժաշխատողների թվաքանակով Շիրակի մարզը Հայաստանում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին:

Միջին բուժանձնակազմի թվաքանակը Շիրակի մարզում տասը հազար բնակչի հաշվով նույնպես ամենամեծն է հանրապետության մարզերում:

Բժիշկների թվաքանակը ՀՀ մարզերում, 2010թ.



Հայաստանի մարզերի հիվանդանոցային մահճակալների ամենամեծ քանակը Շիրակի մարզում է:

2010 թվականին հանրապետության մարզերի հիվանդանոցային մահճակալների գրեթե **մեկ հինգերորդը** Շիրակում է: Տասը հազար բնակչի հաշվով հի-

Հիվանդանոցային մահճակալների քանակը ՀՀ մարզերում, 2010թ.



վանդանոցային մահճակալների քանակով հանրապետության մարզերի թվում Շիրակի մարզը զիջում է միայն Գեղարքունիքին:

2005 թվականից սկսած՝ Շիրակի մարզում աստիճանականորեն աճել է ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ նախկինում տարեց-տարի նվազող հաճախումների քանակը, ինչը վկայում է Շիրակում առողջության պահպանման առաջնային համակարգի զարգացման մասին: 2010 թվականին Շիրակի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ հաճախումների թիվը **շուրջ մեկուկես անգամ ավելին էր**, քան 2005 թվականին: 2010 թվականին ամբուլատոր-պոլիկլինիական հիմնարկներ հաճախումների թիվը Շիրակի մարզում տասը հազար բնակչի հաշվով գրեթե **կրկնակի է** 2004 թվականի համեմատ:

2007-2011 թվականներին Շիրակի մարզի յոթ քաղաքային և գյուղական համայնքներում կատարվել են ներդրումներ՝ ուղղված առողջապահական հաստատությունների վերակառուցմանը, հիմնանորոգմանն ու վերազինմանը:

Հիմնանորոգվել են առողջության պահպանման առաջնային օղակի հաստատություններ՝ ամբուլատորիաներ և առողջության կենտրոններ **Ախուրիկ, Հոռոմ, Անիպեմզա, Մեծ Մանթաշ և Ամասիա** համայնքներում: **Մայիսյան** համայնքի բժշկական կենտրոնում կառուցվել է ջեռուցման համակարգ: Նորոգվել են **Գյումրի** քաղաքի **ծննդատունը**, Գյումրիի **ուռուցքաբանական դիսպանսերը**, Գյումրիի **բժշկական կենտրոնը**, վերակառուցվել է **ընտանեկան**

բժշկության կենտրոնը: **Մարալիկի** առողջության կենտրոնի հիմնանորոգումն ընթացքում է: 2012-2013 թվականներին Շիրակի մարզում վերանորոգվելու են ամբուլատորիաներ ու առողջության կենտրոններ, շուրջ 20 բուժմանկաբարձական կետեր:

2011 թվականին ավարտվել է **Ամասիայի** առողջության կենտրոնի հիմնանորոգումն ու արդիականացումը: Կենտրոնում կառուցվել է ջեռուցման համակարգ: Կենտրոնը հագեցած է ժամանակակից սարքավորումներով, համալրված է մասնագետներով: Կենտրոնին տրամադրվել է **շտապօգնության երկու մեքենա**: 2011 թվականին, 23 տարի անց, Ամասիայի առողջության կենտրոնը կրկին ծննդօգնության համար նախատեսված սարքավորումներ ունեցավ: Կենտրոնն այժմ սպասարկում է շուրջ ինը հազար բնակչի և, ձմռան ամիսներին, երբ տարածաշրջանի ճանապարհները դժվարանցանելի են, արդեն կարող է ապահովել առաջին բժշկական օգնություն ամբողջական ծավալով և պատշաճ որակով:

2011 թվականից **Գյումրի քաղաքում Ավստրիական մանկական հիվանդանոցի** շենքին կից կառուցվում է նոր եռահարկ հիվանդանոցային համալիր: Բուժհամալիրը միավորելու է Շիրակի մարզային, Գյուլբենկյանի անվան վիրաբուժական և Սամարիթեր հիվանդանոցները և կունենա 200 մահճակալ հզորություն, կհագեցվի ինտենսիվ բուժման, ախտորոշիչ բաժանմունքների և վիրահատարանների բժշկական արդիական սարքավորումների նոր ու ամբողջական փաթեթով: Արդյունքում, Գյումրիի մանկական և մեծահասակների հիվանդանոցային համալիր ծառայությունները տեղակայված կլինեն մեկտեղ՝ շիրակցիներին ապահովելով ծառայությունների առավելագույն մատչելիությամբ:

Աշոցքի «Սուրբ Տիրամայր» հիվանդանոցը

«Ես Վանաձորից եմ, Աշոցքի սուրբ Տիրամայր Նարեկ հիվանդանոցի մասին վաղուց գիտեի: Աղիքի պրոբլեմ ունեի, ուզեցի հենց այստեղ վիրահատվել: Իհարկե ,Վանաձորում էլ, Երևանում էլ կան հիվանդանոցներ, բայց էսպիսի հիվանդանոց երևի ողջ Հայաստանում չգտնեք: 54 տարեկան եմ, առիթ եղել է այլ բուժհիմնարկներում լինելու, բայց էսպիսի հոգատարություն, որ կա այս հիվանդանուցում, որևէ տեղ չեմ հանդիպել: Այստեղ և՛ կերակրում են հիվանդներին, և՛ դեղորայքն են տալիս, շատ մաքուր է ամեն ինչը, բուժանձնակազմն էլ պրոֆեսիոնալ է: Նման բան ոչ բոլոր հիվանդանոցներում կտեսնես, դրա համար էլ հեռվից եկել հասել եմ էստեղ»:

Անահիտ Ներսիսյան

2007-2011 թվականներին Շիրակի մարզի առողջապահական հաստատությունները **վերազինվել են** և հագեցվել արդի սարքավորումով: 2011 թվականին Շիրակի մարզի մի շարք քաղաքային և գյուղական համայնքների տրամադրվել է ինը շտապ բուժօգնության մեքենա:

2011 թվականին **Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոցին** տրամադրվել է ինտենսիվ թերապիայի ինկուբատոր, CPAP համակարգ և այլ տեխնիկական սարքավորումներ, ինչը բժշկական անձնակազմին հնարավորություն է ընձեռում հիվանդ նորածինների խնամքն ապահովել արդիական սարքավորումներով:

2011 թվականին **Արթիկի** և **Մարալիկի** հիվանդանոցները հագեցվել են նորածինների խնամքի սարքավորումներով, որոնք անհրաժեշտ են հղիության կամ վաղաժամ ծննդաբերության ընթացքում անկանխատեսելի բարդությունների վտանգներից նորածինների կյանքը փրկելու համար: **Արթիկի Մոր ու մանկան առողջության պահպանման կենտրոնը** հագեցվել է ինտենսիվ վերակենդանացման համակարգով և համալրվել նորածինների խնամքի ինկուբատորով, բուժման լուսաթերապևտիկ համակարգով, թթվածնի մակարդակի չափման համար նախատեսված զարկերակային օքսիմետրով, հեղուկների երակային ներարկման պոմպով, ինչպես նաև մարմնի ջերմաստիճանի պահպանման համար նախատեսված ջեռուցվող ներքնակով: Կենտրոնին տրամադրվել է նաև ուլտրաձայնային շրջիկ սարքավորում:

2012 թվականին Շիրակի մարզում ժամանակակից սարքավորումներով ապահովված էր հիվանդանոցների **գրեթե կեսը**, ախտորոշիչ սարքավորումներով՝ ամբուլատոր- պոլիկլինիկական և հիվանդանոցային հաստատությունների շուրջ 40 տոկոսը: Առաջին օգնության պարագաներով Շիրակում ապահովված է ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների շուրջ 60 տոկոսը: 2012 թվականին Շիրակի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների բժիշկների և բուժքույրերի ավելի քան **95 տոկոսը** վերապատրաստվել է:

2011 թվականի հունվարի 1-ից Շիրակի մարզում ներդրվել են երեխայի առողջության պետական հավաստագրերը՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հիվանդանոցային **անվճար** բժշկական օգնություն և սպասարկում ապահովելով Շիրակի մարզի մինչև յոթ տարեկան երեխաների համար:

Գյումրիի **«Ծննդատուն»** ՓԲԸ-ն մանկաբարձա-գինեկոլոգիական ծառայությունների մատուցման որակի բարձրացման և բուժսարքավորումների հագեցվածության շնորհիվ վաստակել է երկրորդ՝ ավելի բարձր մակարդակի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատության կարգավիճակ: **Գյումրիի** ծննդատան, և **Արթիկի** Մոր ու մանկան առողջության պահպանման կենտրոնի շրջիկ գինեկոլոգիական ծառայությունները կանանց համար իրականացրել են լաբորատոր-ախտորոշիչ հետազոտություններ Շիրակի մարզի հեռավոր համայնքներում: Արդյունքում, 2007-2011 թվականներին Շիրակի մարզում բացառ-

Բժշկական նորագույն սարքավորումը Շիրակի մարզում

«Մանկաբարձուհի եմ: Հիմա լավ բուժ-պայմաններ ունենք, իսկ ամառը մենք միհարկանի շենքում էինք: Համ ծննդաբերությունն էր նույն պալատում, համ մենք էինք նստած: Իսկ հիմա լավ պայմաններ են ստեղծված, բոլոր սարքավորումներն էլ ունենք: Դեղորայքով ապահովված ենք, սարքավորումները կան»:

Սիլվա Վարդանյան, Ամասիայի առողջապահական կենտրոնի բուժքույր

վել է մայրական մահացությունը, Շիրակի մարզում բոլոր ծնունդներն ընթացել են որակյալ բժշկական միջամտությամբ: 2011 թվականին Շիրակի մարզում իմունականխարգելման գործընթացի շրջանակներում պատվաստումներում երեխաների ընդգրկվածությունը շուրջ **98 տոկոս** էր:

Շիրակի մարզի առողջապահական հաստատությունների արդիականացման, բուժհաստատությունների կարողությունների հզորացման և հեղինակության բարձրացման արդյունքում, 2010 թվականին Շիրակի հիվանդանոցներում ստացիոնար պայմաններում բուժում է ստացել **15 տոկոսով ավելի** հիվանդ, քան 2009 թվականին: Երևանի բուժհաստատություններ ուղեգրվել են բուժօգնություն ստացածների 0.3 տոկոսը միայն. Շիրակցիներին առողջապահական ծառայություններ են մատուցել գերազանցապես մարզի առողջապահական հիմնարկները:

2011 թվականին Մարալիկ քաղաքում մարզի բնակիչների համար անցկացվել են **անվճար ակնային զննումներ** և բուժում՝ սոցիալապես անապահով անձանց համար: Ակնաբուժական խմբերն այցելել են Շիրակի մարզի երկու քաղաքային և **44 գյուղական համայնքներ**. անվճար հետազոտվել է **600**, վիրահատվել՝ **406** կարիքավոր քաղաքացի: Շիրակի մարզի ինը դպրոցներում ակնային զննումներին զուգահեռ անցկացվել են նաև ակնային խնամքի հանրակրթական հատուկ դասընթացներ երեխաների համար:

2007-2011 թվականներին ատամնաբուժական անվճար ծառայություններ է ստացել ավելի քան **23 հազար երեխա**:

Շիրակի մարզում 2007-2011 թվականներին մանկական տարբեր հիվանդություններով տառապող **հարյուրավոր** երեխաներ ու մեծահասակներ վերականգնողական-առողջարանային բուժում են ստացել հանրապետության առողջարաններում:

Մշակույթն ու սպորտը

Շիրակի մարզի պետական մասնագիտացված թատրոններում 2007-2010 թվականներին՝ չորս տարում, բեմադրվել և խաղացվել է **ավելի շատ ներկայացում**, քան հանրապետության որևէ մարզում: 2010 թվականին Շիրակի մարզի պետական մասնագիտացված թատրոնների բեմերում խաղացվել է **երկու անգամ ավելի** ներկայացում, քան 2001 թվականին:

Թատերական ներկայացումների քանակը ՀՀ մարզերում, 2007-2010թթ.



Թատերասեր է շիրակցին. Հայաստանի ուրիշ ոչ մի մարզում թատրոնները չունեն այնքան հանդիսատես, որքան Շիրակում: 2007-2010 թվականներին՝ չորս տարում, Շիրակի թատրոններում հանդիսատեսների թիվը կազմել է մարզի բնակչության գրեթե կեսը: 2010 թվականին Շիրակի մարզում պետական մասնագիտացված թատրոններում հանդիսատեսների թիվը 2003 թվականի կրկնապատիկն է:

Հայաստանի մարզերի թվում հանդիսատեսների ամենամեծ թվաքանակը Շիրակում է:

Հանրապետության մարզերի համեմատ՝ Շիրակի մարզում են գործում **ամենամեծ թվով թանգարանները**: Ընդ որում, թանգարանների թիվը Շիրակի մարզում 2010 թվականին **մեկ երրորդով ավելի է**, քան 2003 թվականին: Ուս-

Թատերական ներկայացումների հանդիսատեսների քանակը ՀՀ մարզերում, 2010թթ. (հազար մարդ)



2010 թվականին Շիրակի մարզի թանգարաններում ցուցադրությունների թիվը 2001 թվականի հնգապատիկն է, իսկ 2007 թվականի համեմատ այն եռապատկվել է:

տի զարմանալի չէ, որ Շիրակի մարզի թանգարանների այցելուների թվաքանակը հանրապետության մարզերի համեմատ **ամենամեծն է.** 2010 թվականին Շիրակի մարզի թանգարաններում գրանցվել է այցելուների թվի աննախադեպ ցուցանիշ. Շիրակի թանգարաններն ունեցել են **շուրջ քառասուն հազար այ-**

Գրադարանների քանակը 2010թ.



2010 թվականին Շիրակի մարզի թանգարաններ այցելել է տասնհինգ անգամ ավելի այցելու, քան 2002 թվականին, կրկնակի ավելի, քան 2006 թվականին:

ցելու՝ մարզում գրեթե յուրաքանչյուր ութ բնակչից մեկը 2010 թվականին հաճախել է թանգարան:

Հանրապետության մարզերի համեմատ՝ Շիրակի մարզում գրադարանների **ամենամեծ թվաքանակն է՝** Այունիքից հետո: 2008 թվականից ի վեր Շիրակի մարզում ընթերցողների և հաճախումների թվաքանակը վերջապես սկսել է աճել նախորդ տարիների շարունակական նվազումից հետո: 2010 թվականին Շիրակի մարզի գրադարաններ հաճախել են **ավելի քան 738 հազար մարդ՝ երկուսուկես անգամ ավելի**, քան մարզի բնակչությունը:

Շիրակի մարզում գործում են եռապատիկ ավելի գրադարաններ, քան մայրաքաղաք Երևանում:

2011 թվականին Գյումրիում կազմակերպված «Արտ-էքսպո» ցուցահանդես-փառատոնին



Հառիճի վանական համալիրը, VII-XIIIդդ.



Դարբին Պապոյանների երթը
ժամանակի միջով

Գյումրիում հայտնի արհեստավոր դարբինների գերդաստան են Պապոյանները: Նրանց դեռևս 19-րդ դարում կոչել են «Կալոսնիկենք»՝ նկատի ունենալով, որ հիմնականում ֆուրգոնի անիվներ են պատրաստել:

«Մեր գործը մրոտ գործ է, սաղ վախտ կրակի դեմն ենք, հիմիկվա ջահելությունը չի ուզե սորվի,— ասում է «Կալոսնիկենց» տոհմի ներկայացուցիչ՝ դարբին Գագիկ Պապոյանը,— ըդուր համար էլ աշակերտ չունիմ, մենակ Գարիկս՝ տղես կօգնե, ինքն էլ դարբնություն կենե»:

Քաղաքի բազմաթիվ մետաղահյուս դարպասները, կռածո վանդակաճաղերն ու լապտերներն այս տոհմի ներկայացուցիչների ձեռքի գործն են: «Մենք սոված ենք մնացել, բայց ես առևտուր չեմ էրել: Դարբինը չի կռնա սեղանիկ դնե չարչիություն էնե, դարբինը պդի դարբնությամբ զբաղվե: Մենք պդի մեր չագուչը զարգենք, մեր փողն աշխատինք»,— ասում է Գագիկ Պապոյանը:

Վերջին տասնամյակում դարբնագործությունը պահանջարկ է վայելում՝ շնորհիվ Գյումրիում մեծ թափ ստացած շինարարության: Վարպետ Գագիկը գոհ է պատվերներից, որ ստանում է, թե՛ մասնավորից, թե՛ պետականից: «Ըսիկ կնշանակե, որ քաղաքս կկառուցվի, մարդիկ տուն կսարքեն, տունն էլ սարքեց, ուրեմն պարիսպ ու երկաթից դուռ գուզե, լուսամուտին ճաղ գուզե, ուրեմն մենք էլ աշխատանք կունենաք, ուրեմն դարբնությունը կշարունակե ապրիլ Գյումրու մեջ»,— խոսակցությունը եզրափակում է դարբինների հնագույն տոհմերից մեկի ներկայացուցիչ՝ 57-ամյա Գագիկ Պապոյանը:

Հանրապետության մարզերի համեմատ մարզական կազմակերպությունների **ամենամեծ թվաքանակը** Շիրակի մարզում է. Հայաստանի մարզերի մարզական կազմակերպությունների գրեթե մեկ երրորդը գտնվում է հենց Շիրակի մարզում:

Շիրակում են հանրապետության մարզերում գործող մարզական խմբերի գրեթե քառասուն տոկոսը՝ 906 խումբ:

Հանրապետության մարզերում **մարզիկների շուրջ մեկ երրորդը շիրակցի է**՝ ավելի քան **7,700 մարզիկ**: Շիրակցի է հանրապետության գյուղական վայրերում բնակվող յուրաքանչյուր հինգերորդ մարզիկը:

Հանրապետության մարզերում **մարզիչների թիվն ամենամեծը Շիրակում**

Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում արդեն 2009 թվականին կար երկուսուկես ագնամ ավելի մարզիկ, քան 2004 թվականին:

Մարզիկների քանակը ՀՀ մարզերում 2010թ.



է. Շիրակում են հանրապետության մարզերում աշխատող յուրաքանչյուր տասը մարզիչներից երեքը: Հայաստանի գյուղական բնակավայրերում յուրաքանչյուր երեք մարզչից մեկը աշխատում է Շիրակի մարզում:

Մարզական խմբերի քանակը Շիրակի մարզում



2007-2011 թվականներին Գյումրի քաղաքում և Շիրակի մարզի 12 գյուղական համայքներում իրականացված կապիտալ ներդրումային ծրագրերի արդյունքում նախագծվել, կառուցվել և հիմնանորոգվել են մշակույթի տներ և համայնքային կենտրոններ, նորոգվել ու ջեռուցվել են արվեստի դպրոցներ, գրադարաններ ու թատրոններ, թանգարաններ ու պատկերասրահներ:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են **Գյումրիի «Աշխատանքային ռեզերվներ»** մարզադպրոցը, Գյումրիի ծանրամարտի և քաղաքապետարանի բռնցքամարտի մարզադպրոցը:

Համայնքային կենտրոններ են վերակառուցվել, նորոգվել և բարեկարգվել Շիրակի մարզի **Հարթաշեն, Քարաբերդ, Իսահակյան, Մեղրաշատ** և **Ամասիա** համայնքներում:

2009-2011 թվականներին **Արթիկ** քաղաքում կառուցվել է նկարիչ **Վարազ Սամուելյանի անվան մշակույթի կենտրոնը**. երկհարկանի շենքում տեղակայված են ցուցասրահը, հանդիսությունների դահլիճը, շախմատի սրահը, համակարգչային սենյակն ու հանդերձարանը, կերպարվեստի և երաժշտական խմբակների դասասենյակները, կենտրոնում ցուցադրվում են Վարազ Սամուելյանի կտավները:

Վերանորոգվում է **Ազատան** համայնքի մշակույթի տունը, վերակառուցվում

է Հայաստանի Հանրապետության պետական պատկերասրահի Գյումրիի մասնաճյուղի շենքը: Գյումրիում **կառուցվում է Կաթողիկե եկեղեցի**, հիմնանորոգվում է **Վահրամաբերդ** համայնքի՝ երկրաշարժից ավերված մշակույթի տունը, ուր գտնվում է մեծ հանճարի՝ **Մինաս Ավետիսյանի «Հայաստան»** որմնանկարը:

2011 թվականին վերականգնվել և Գյումրիի քաղաքապետարանի նորակառույց շենքի նիստերի դահլիճ է փոխադրվել Մինասի **«Հայկական հովվերգություն»** որմնանկարը, վերականգնվել ու Գյումրիի պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններից մեկի սրահ է փոխադրվել Մինասի **«Գորգ են գործում»** որմնանկարը:

Գյումրի քաղաքի քանդակագործները քանդակել և Գյումրիի **«Սուրբ Ամենափրկիչ»** եկեղեցու հարևանությամբ գտնվող նորաբաց **«Խաչքարերի պու-**

Գյումրու Ամենափրկիչ եկեղեցու վերանորոգման աշխատանքներն ընթանում են լայն թափով

ռակում» են տեղադրել **Ջուղայում ավերված խաչքարերի կրկնօրինակները**՝ իբրև յուրօրինակ բողոք ընդդեմ ադրբեջանցիների կողմից Ջուղայում իրագործված մշակութային եղեռնի. պուրակում տեղադրվելու է ավելի քան հարյուր խաչքար:

2010 թվականին Շիրակի մարզի **Հայկաձոր** համայնքում Հայաստանի հին մայրաքաղաքներ Անիի և Դվինի, ինչպես նաև Գուսանագյուղի մասին բազմալեզու տեղեկատվական վահանակներ են տեղադրվել:

Տարբեր մարզաձևերի համար անհրաժեշտ պարագաներով կահավորվել է **Մարմաշեն** գյուղի դպրոցի մարզադահլիճը: Մարմաշենը Հայաստանի այն գյուղերից մեկն է, որ կարող է հպարտանալ իր փառահեղ սպորտային անցյալով և ներկայով:

2012 թվականին Գյումրիի **«Շիրակ»** ֆուտբոլային թիմը Հայաստանի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ առաջին հանդիպումը կանցկացնի սեփական հարկի տակ՝ **վերանորոգված մարզադաշտում**:

2007-2011 թվականներին ակտիվացել է մշակութային կյանքը Շիրակի մարզում: 2010 թվականին **Գյումրի** քաղաքում բացվել է **«Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը» ցուցահանդեսը**, իրականացվել է **«Ձավախքում Շիրակի օրեր»** մշակութային ծրագիրը:

2012 թվականին Գյումրիի «Շիրակը» Հայաստանի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ առաջին հանդիպումը կանցկացնի սեփական հարկի տակ՝ վերանորոգված մարզադաշտում

Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի նախաձեռնությամբ Գյումրիում անցկացվեց երաժիշտ կատարողների **«Վերածնունդ» 3-րդ միջազգային փառատոնը**: Գյումրիում անցկացվեց նաև փողային նվագարանների հանրապետական փառատոնը: 2011 թվականին **«Երգող Հայաստան»** մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական փառատոնին մարզի երգչախմբերը արժանացան հատուկ մրցանակի, ինչպես նաև 1-ին, 2-րդ, 3-րդ և խրախուսական մրցանակների:

2011 թվականին ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո Գյումրիում կազմակերպվել է Միջհամայնքային մշակութային I-ին մարզային **«ArtExpo»** ցուցահանդեսն ու մրցույթ-փառատոնը, որին մասնակցում էր հանրապետության բոլոր մարզերի ավելի քան 100 քաղաքային և գյուղական համայնք: 2011 թվականին **Արթիկի** համայնքը ճանաչվել է **«Լավագույն քաղաքային համայնք 2011»**, **Ամասիայի** համայնքը՝ **«Մաքուր համայնք 2011»**, իսկ **Գյումրին՝ «Լավագույն մշակութային համայնք 2011»**:

2007-2011 թվականներին շիրակցիները աշխարհի և Եվրոպայի պաշտոնական առաջնություններում և օլիմպիական խաղերում նվաճել են **135 մրցանակներ**, այդ թվում՝ 37 ոսկե, 47 արծաթե և **51 բրոնզե** մեդալներ: Նման նվաճումն աննախադեպ է անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ: Մարզական նվաճումներով 100 հազար բնակչի հաշվով **Շիրակի մարզը գերազանցում է տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներին**, այդ թվում՝ տարածաշրջանի «գերծանր քաշայիններին»: Այսպես, եթե 280 հազար բնակիչ և 37 ոսկե մեդալակիր ունեցող Շիրակի մարզը հարևան Թուրքիայի կամ Իրանի չափ՝ շուրջ 75 միլիոն բնակչություն ունենար, ապա ոսկե մեդալակիրների թիվը Շիրակի մարզում կլիներ գրեթե 10,000:

2009 թվականին Շիրակի մարզը Հայաստանին պարգևեց անկախ հանրապետության ծանրամարտի աշխարհի առաջին չեմպիոնին. **Նազիկ Ավդալյանը** հաստատեց շիրակցու դյուցազնական էությունը իր նախորդի՝ 43 համաշխարհային ռեկորդ սահմանած, միջինքաշային ծանրամարտիկներից մինչ այժմ իր արդյունքով անգերազանցելի մարզական հանճարի՝ Յուրի Վարդանյանի պես: 2010 թվականի Հայաստանի լավագույն մարզիկ է ճանաչվել ծանրամարտի աշխարհի և Եվրոպայի չեմպիոն՝ շիրակցի **Տիգրան Մարտիրոսյանը**, լավագույն

տասնյակում ընդգրկվել է նաև մեկ այլ շիրակցի՝ ծանրամարտի աշխարհի և Եվրոպայի մրցանակակիր **Մելինե Դալուզյանը**:

Միայն 2011 թվականին Շիրակի մարզի շուրջ 100 մարզիկ-մարզուհիներ և 10 մարզիչներ տարբեր մարզաձևերում ընդգրկվել են Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի կազմերում: Հանրապետական առաջնություններում շիրակցիները նվաճել են **78 առաջին, 97 երկրորդ** և **105 երրորդ** մրցանակներ:

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար **«Լավագույն մարզական ընտանիք»** հանրապետական մրցույթում երկրորդ տարին անընդմեջ հաղթող է դարձել Գյումրիի **«Ալեքսանյաններ»** թիմ-ընտանիքը: Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար **«Լավագույն գյուղական մարզական համայնք»** հանրապետական ստուգատեսում հաղթող է ճանաչվել **Նոր Կյանք** համայնքը:

2010 թվականին Շիրակի դպրոցականների աթլետիկայի և բասկետբոլի հավաքական թիմերը նվաճել են դպրոցականների հանրապետական 19-րդ մարզական խաղերի հաղթողի տիտղոսը: 2011 թվականին մարզի դպրոցների հավաքականները հաղթել են դպրոցականների 20-րդ հանրապետական մարզական խաղերի, **«Կորյուն»** և **«Դիպուկ հրաձիգ»** ռազմամարզական խաղերի եզրափակիչ մրցումներում: **Սառնաղբյուրի** դպրոցի թիմը երկրորդ տարին անընդմեջ հաղթող է դարձել նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների մասնակցությամբ ռազմամարզական խաղերի հանրապետական եզրափակիչ մրցումներում: Շիրակի մարզի դպրոցականների հավաքական թիմը նվաճել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գավաթը: 2010 թվականին Ամասիայի դպրոցի թիմը հաղթող է դարձել դպրոցականների **«Հուսո մեկնարկներ»** հանրապետական մրցումներում:

«Երբ հասա հայրենի քաղաք, իմ բոլոր բարեկամներն ինձանից խնդրում էին իմ համազգեստը՝ «Շիրակի» տարբերանշանով: Որոշեցի ողջ հանդերձանքս բաժանել, նախ, փոքր եղբորս տվեցի, հետո արդեն՝ բարեկամներիս: Գիտե՞ք, բոլորը ճանաչում են «Շիրակին» և հետևում են իմ խաղին»:

Լի Լամին Յորո, Գյումրիի «Շիրակի» սենեգալցի կիսապաշտպան

2007-2011 թվականներին Շիրակի մարզի շուրջ **տասը** պատանիներ ու աղջիկներ մրցանակներ են նվաճել միջազգային հեղինակավոր օլիմպիադաներում՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և այլ առարկաների գծով: Երաժիշտ-կատարողների **«Վերածնունդ»** միջազգային մրցույթ-փառատոնի դափնեկիր են դարձել շիրակցի երեք պարմանուհիներ:

Սոցիալական վիճակը

Շիրակի մարզում 2011 թվականին գրանցված հանցագործությունների թիվը տասը հազար բնակչի հաշվով Հայաստանում **ամենացածրերից է**:

2011 թվականին Շիրակի մարզում գրանցվել են շուրջ երկուսուկես անգամ պակաս հանցագործություններ տասը հազար բնակչի հաշվով, քան մայրաքաղաք Երևանում և մեկուկես անգամ պակաս, քան միջինը հանրապետությունում:

Կարիքավորների թիվը Շիրակի մարզում տարեց-տարի նվազել է. 2010 թվականին նպաստառու ընտանիքների թիվը Շիրակում 2000 թվականի համեմատ նվազել է կիսով չափ: 2010 թվականին նպաստառու ընտանիքների թվով Շիրակի մարզը **հանրապետության երրորդն էր**՝ մայրաքաղաք Երևանից և Լոռու մարզից հետո:

2010 թվականին Գյումրիում **ստեղծվել է հաշմանդամների աշխատանքային վերականգնողական կենտրոն**: 2011 թվականին գործարկվել է Գյումրու հաշմանդամների ասոցիացիայի կարի ընդլայնված արտադրամասը, որը զբաղվածություն կապահովի **40-45 հաշմանդամների համար**: Շուրջ **340 հաշմանդամ շիրակցի** ստացել է վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ: Շիրակի մարզում բազմաթիվ շենքեր ու շինություններ սարքավորվել են թեքահարթակներով և այլ օժանդակ միջոցներով: **72 սոցիալական նշանակության շենք ու շինություն,** ինժեներական այլ կա-

Գրանցված հանցագործությունների քանակը 10,000 բնակչի հաշվով 2011թ.



ռույցներ՝ սոցիալական ենթակառուցվածքների 12 տոկոսից ավելին, հարմարեցվել են հաշմանդամների համար:

2011 թվականին քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսազերծման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունն **արտոնյալ պայմաններով**՝ վեց ամիս ժամկետով և զրոյական տոկոսադրույքով, վարկեր է տրամադրել վրացական պետհամարանիշերով ատոմեքենաների՝ սոցիալապես անապահով **ավելի քան 300** շիրակցի սեփականատերերի՝ դրանց մաքսազերծման բեռը թեթևացնելու նպատակով:

2009-2011 թվականներին հողի հարկի գծով սահմանված արտոնությունից Շիրակի մարզում օգտվել են թվով **17,871 քաղաքացիներ**:

Շիրակի մարզի ցերեկային խնամքի կենտրոններում և տնային պայմաններում խնամքի ծառայություններ են մատուցվում **340 ծերերի**: Վերականգնողական և օժանդակ տեխնիկական այլ պարագաներ են ստացել շուրջ 340 հաշմանդամներ, այդ թվում՝ ավելի քան 120 երեխա: Խնամքի և սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծառայություններից **օգտվել է շուրջ 360 երեխա**:

2011 թվականին Մարալիկ քաղաքում սոցիալական բնակարանաշինության շրջանակներում շահագործման է հանձնվել **35 բնակարան**:

Միայն 2011 թվականին դրամական աջակցություն է ցուցաբերվել Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների ավելի քան **190 ընտանիքի**,

հայրենիքի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված շուրջ **200 զինծառայողների ընտանիքների**, **40 առաջին խմբի հաշմանդամ ազատամարտիկների**, Հայրենական մեծ պատերազմի շուրջ **230 վետերանի**:

2011 թվականին Շիրակի մարզի սոցիալական ծառայությունների կեսից ավելին ապահովված էր նոր համակարգիչներով:

2011 թվականին Շիրակի մարզում խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցություն է ստացել շուրջ **360 երեխա**: 2011 թվականին Շիրակի մարդասիրական ճաշարանները սպասարկել են **680 կարիքավորների**:

2011 թվականին Շիրակի մարզի սոցիալապես խիստ անապահով ընտանիքների և խնամքի հաստատություններում գտնվող երեխաների ամառային հանգիստը կազմակերպվել է Հանքավանի, Ծաղկաձորի, Վանաձորի, Լուսակերտի Թորոս գյուղի, Շիրակի թեմի Եղնաջուրի ճամբարներում, ինչպես նաև «Փյունիկ» հաշմանդամների միության բակային ճամբարում. ընդհանուր թվով՝ 2,245 երեխա: 2010 թվականի համեմատ՝ ամառային հանգստի են մեկնել կարիքավոր ընտանիքների՝ 12 տոկոսով ավելի երեխաներ:

2007-2011 թվականներին Շիրակի մարզի համայնքներում վարձատրվող հասարակական աշխատանքների մեջ են ներգրավվել տարեկան միջինում շուրջ 1200 աշխատանք փնտրողներ:

Շուրջ երկուսուկես տասնամյակ առաջ աղետալի երկրաշարժը Հայաստանում տակնուվրա արեց մեծ ու փոքր շուրջ չորս հարյուր բնակավայր, ամբողջությամբ ավերեց շուրջ վաթսունը, զոհվեց ավելի քան քսաներեք հազար մարդ, կես միլիոնից ավելի մարդիկ մնացին անօթևան: Աղետը հսկայական վնասներ հասցրեց բնակելի և արդյունաբերական շենքերին, ուսումնական հաստատություններին. քանդվեց շուրջ չորս հարյուր դպրոց, երկու հարյուր հիսուն մանկապարտեզ, հինգ հարյուրից ավելի առողջապահական հաստատություն, երեք հարյուրից ավելի համայնքային և մշակութային կենտրոն: Աղետը հաշված րոպեներում խորտակեց բազմաթիվ մարդկանց կյանքն ու կործանեց դարեր շարունակ սերունդների ստեղծածը: Երկրաշարժի ժամանակահատ դանակը շիրակցու կյանքը դաժանաբար երկու մասի բաժանեց. աղետից առաջ ու աղետից հետո: Առաջինը մնաց հուշերում միայն: Իսկ կիսված հարյուր հազարավոր կյանքերի երկրորդ կեսը դարձավ տառապանքի ու վերագտնումի, մաքառումի ու հաղթանակների ժամանակաշրջան: Երկուսուկես տասնամյակ շիրակցին գոյության պայքար էր մղում ու, անդառնալի կորուստների մորմոքը սրտում, փորձում էր ոտքի կանգնել ու կյանք տալ իր հին ու նոր երազներին: Փորձում էր վերագնտել ավերումի փոշում խեղդված կենսուրախությունն ու նվաղած հպարտությունը: Փորձում էր վերահմաստավորել կյանքը, գտնել գոյության նպատակն ու ապրելու կամքը՝ միլիարդների համար անփոփոխ, սակայն իր համար մի ակնթարթում անդառնալիորեն փոխված աշխարհում:

Իրավա՛մբ, աղետները գլխովին փոխում են մարդու կյանքն ու մարդկային հարաբերությունները, սանդղազերծում են կշեռքը, որով մարդը երեկ գնահատում էր լավն ու վատը, չարն ու բարին, կարևորն ու երկրորդականը...

Աշխարհի հզորագույն երկրներին հարվածած աղետները ի ցույց դրեցին, թե որքան խոցելի է մարդկային քաղաքակրթությունը բնության արհավիրքի առջև. հազարավոր զոհված ու անհայտ կորած, միլիոնավոր տնազուրկ ու տեղահանված, հարյուրավոր միլիարդների ԱՄՆ դոլարը գերազանցող վնաս տնտեսությանը, որոնց հետևանքները մինչ օրս դեռևս

վերջնականապես հաղթահարված չեն: Սակայն ամենացավալին, թերևս, բնության տարերքի հարվածների տակ կորսված մարդկային արժեքներն էին. տասնյակ սպանություններ, թալան, մի փոր հացի համար սպանված մարդիկ, բռնաբարություններ ու հազարավոր հանցագործություններ...

Աշխարհի հեռավոր անկյունում ծվարած, փոքրաթիվ ու բազում արհավիրքներ տեսած ժողովուրդը սակայն, երբեք չկորցրեց իր մարդկային դեմքը, երբեք չառավ հացը երեխայի ձեռքից, չջարդեց հարևանի գլուխը մի տուփ պահածոյի համար, չդարձավ գազան ու միշտ ու ամենուր մնաց Մարդ: Մարդ մնաց՝ հավատալով, որ ապրելու իմաստը Մարդ լինելն է, որ եթե ողջ է մնացել հազարների կյանքը խլած արհավիրքի ավերակներում, ապա ողջ է մնացել միայն ու միայն մարդ մնալու համար: Աղետին հաջորդած տասնամյակներում շիրակցին պիտի ապացուցեր, որ աղետը վերապրել նշանակում է մարդ մնալ, փայփայել, պահպանել ու բազմապատկել մարդկայինը: Պիտի ապացուցեր, որ իզուր չէր հպարտանում իր արժեքներով ու կենսակերպով՝ իր տեսակը մարդկայնության չափանիշ ընդունելով:

Նվիրումն արժեքներին ու վաղվա օրվա նկատմամբ հավատը դարձան այն սյուները, որոնց հենված շիրակցին տարեց-տարի ոտքի էր կանգնում ու վերագտնում կորցրած ուժն ու կենսուրախությունը: Ապագայի հանդեպ հավատի ու վաղվա բարեկեցիկ կյանքի ձգտումով արհավիրքի դեռ չսպիացած վերքը սրտում՝ շիրակցին բազմիցս դարձավ լավագույնը յոթ միլիարդանոց բնակչություն ունեցող այս աշխարհում, բարձրացավ օլիմպոսի գագաթն ու վայր իջավ փառավոր նվաճումներով, որոնցով հպարտանում են Հայաստանն ու հայությունը:

Եվ Շիրակը կրկին դառնում է հայոց ստեղծագործ ոգու արգանդն ու հայ հանճարի օրրանը: Ու ինչպես դարեր շարունակ, շիրակցին մարդկությանն առատորեն պարգևում է իր զավակների մտքի ու բազկի հոյակերտ գոհարները, շլացնում է իր մտքի փայլատակումներով, ջերմացնում իր հոգու վեհությամբ ու առաջ մղում ապագայի հանդեպ իր հավատով ու վստահությամբ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Շիրակի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործընկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Շիրակի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը շիրակցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012